Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

2293

84
Ս-86

1980

2011

2003

ՄՕԼԻԷՐ.

# ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ
# ԽՐԱՏ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ.

**ՄՕԼԻԷՐԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՄԲ**

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ԴԱԼԳԵՕԶԱՆՑ ԵԿՈՒՓ.

ՀԱՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴ... С.С.Р.А Публичная Биб... 7/XI 1922 имени А. Мясн... Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ...

ՏԻՖԼԻՍ

Ա. Ա. Միխէլսօնի տպարանում

1880.

*Дозволено цензурою. Тифлисъ. 25-го августа 1880 г.*

**ՆՈՒԻՐՈՒՄ Է**

**ԵՐԱԽՏԱԳԷՏ**

ՍՐՏՈՎ.

**ԱՊԷՔՍԱՆԴՐ**

ԲԱԼԱՆԹԱՐԵԱՆՑԻՆ

ԹԱՐԳՄԱՆԻՉԸ.

խելօք պապերը հագել են։ Իսկ ում որ հաճելի չէ այս, թող ուշադրութիւն չդարձնէ ինձ վրայ։

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԼԷՕՆՕՐԱ, ԵՂԻՍԱԲԷԹ, ԼԻԶԷԹ, ԱՐԻՍՏ, ՍԳԱՆԱՐԷԼ (բեմի առաջնամասում խօսում են)։

ԼԷՕՆՕՐԱ. (Եղիսաբէթին) Ես շատ տխրում եմ, քոյր, որ քեզ միշտ յանդիմանում են։

ԼԻԶԷԹ. Կեանք է էլի, էլ ինչ ասել կ'ուզէ. անդադար սենեակում փակուել. անկարելի էլ է դուրս նայել։

ԵՂԻ. Ա՜հ թէ որպիսի ճանկերի մէջ եմ ընկել։

ԼԷՕՆՕՐԱ. Ցաւում եմ քեզ վրայ, քոյր։

ԼԻԶԷԹ. (Լէօնորային)։ Բայց նրա եղբայրը բոլորովին ուրիշ մարդ է, նրա կեանքը ազատ է։

ԵՂԻ. Զարմանում եմ, թէ դուրս գնալիս ինչպէս չկողպեց դուռը, կամ ինձ հետը չտարաւ։

ԼԻԶԷԹ. Ի՜հ, ճշմարիտ եմ ասում, որ եթէ ես լինէի քո տեղ, նրա գլխին իր գլխանքով այն խաղը կ'խաղայի որ.....

ՍԳԱՆ. (Լիզէթին դիպչելով)։ Ո՞ւր էիք այնպէս վազում, ասացէ՛ք տեսնեմ։

ԼԷՕՆՕՐԱ. Դեռ մենք էլ չգիտենք, միայն խնդրել էի քրոջս զբօսնելու համար, այժմ եղանակը լաւ է, մի փոքրիկ ընկերութիւն կազմել։ Բայց.....

ՍԳԱՆ. (Լէօնորային) Ձեր մասին միայն այս կասեմ, որ դուք ուր կամենաք կարող էք գնալ։ (Լիզէթին) Դուք միայն վազել գիտէք. չեն կարող բաժանուել, ուր մէկն է, անպատճառ միւսն էլ նրա հետից։ (Եղիսաբէթին) Իսկ դուք, չէ՞ կարելի որ տանը մնաք։

ԱՐԻՍՏ. Ի՜հ, եղբայր, թ'ող քիչ ուրախանան։

ՍԳԱՆ. Չեր խոնհար ծառան։

ԱՐԻՍՏ. Երիտասարդութիւնը ուրախութիւն է պահանջում։

ՍԳԱՆ. Երիտասարդութիւնը յիմար է, նոյնպէս և երբեմն ծերութիւնը։

ԱՐԻՍՏ. Գուցէ կարծում էք Լէօնորայի հետ մանգալը նրան վայել չէ։

ՍԳԱՆ. Ընդհակառակը. բայց աւելի լաւ է որ ինձ մօտ մնայ։

ԱՐԻՍՏ. Այնուամենայնիւ.....

ՍԳԱՆ. Նրա ցանկութիւնները պիտի յարմարուեն իմին, այնուհետև ես գիտեմ թէ ինչպէս կ՚վարուեմ նրա հետ։

ԱՐԻՍՏ. Ինչպէս որ նրա քոյրը իմ հոգատարութեան է յանձնուած, նոյնպէս և Եղիսաբէթին քեզ են յանձնել. ուրեմն ինչու եմ ազատութիւն տալիս նրան։

ՍԳԱՆ. Ո՛հ, տէր Աստուած։ Ամէն մարդ իր չափով է չափում։ Նրանք քոյրեր են։ Նրանց հայրը մեր հին բարեկամը լինելով, մեռնելիս մէկին քեզ յանձնեց, իսկ միւսին ինձ, որ կրթենք. իսկ ժամանակով պսակուենք նրանց հետ, կամ եթէ չենք կամենում՝ մեր ցանկութեան համեմատ վարուելով մի նպատակի հասցրնենք։ Ուրեմն, դու Լէօնորայի հետ ինչպէս կամենաս կարողես վարուել, իսկ նրա քրոջ հետ վարուելը իմ կամքից է կախուած։

ԱՐԻՍՏ. Բայց ինձ թւում է....

ՍԳԱՆ. Ես այսպէս կարծում և անկեղծ եմ ասում, կարելի է կամենում ես Լէօնորադ ամէն տեղ չափչփէ, զարդարուի, ծառաներ և աղախիններ ունենայ, բաւականութիւնների ետևից գնայ, զուր ժամանակ անցկացնի, զարդասէրներով շրջապատուի. բայց չեմ կամենում իմը այդպէս ապրի։ Ես կամենում եմ, որ Եղիսաբէթս այնպէս օրիորդի պէս չիթ շորերով մանգայ, իսկ տօն օրերը սևեր, որ նա ինչպէս համեստ օրիորդի վայել է՝ տանը մնայ, տնային գործերում արի լինի, ազատ ժամանակ շապիկներս կարկատէ, կամ թէ



զուարճութեան համար գուլպաներ կարկատի, որ նրա ականջին չհասնեն փրանտների գրաւող խօսքերը, և դուրս չգնայ առանց ինձ։ Կնոջ բնաւորութիւնը թոյլ է. եթէ ես ուզենամ նրան ինձ կին ընտրել՝ չեմ կամենայ, որ անուանս վրայ մի որև իցէ կեղտ գիպչի։ Ես մտքումս դրել եմ ամէն միջոց գործ դնել նրա բնաւորութիւնը պահպանելու համար։

ԵՂԻՍԱԲԷԹ. Կարծեմ էլ խօսելու տեղը չէ.....

ՍԳԱՆ. Խնդրեմ լռէք։ Կարծեմ, ձեզ շատ լաւ յայտնի է, որ առանց ինձ չպէտքէ դուրս գնաք։

ԼԷՕՆՈՐԱ. Ինչու։

ՍԳԱՆ. Տէր Աստուած, ես ձեզ հետ չեմ խօսում, տիկին. դուք շատ խելօք էք։

ԼԷՕՆՈՐԱ. Մի՞թէ վախենում էք քոյրս մեզ մօտ մնալուն համար։

ՍԳԱՆ. Այո. կարճ կտրեմ, դուք նրան կ՚փչացնէք։ Ձեր այցելութիւնները ամենեւին ինձ յաճելի չեն, և ես կ՚ցանկայի, որ բաւական համարէք և կրճատէք։

ԼԷՕՆՈՐԱ. Եթէ այդպէս է ես էլ համարձակ բոլորը կ՚ասեմ. բայց չգիտեմ թէ քոյրս այս բաների վրայ ինչպէս է նայում. այնուամենայնիւ, եթէ նրա տեղը լինէի ցոյց կ՚տայի նրա հաւատ չընծայելը։ Թէև քոյր ենք, բայց այս դէպքում միմիանց շատ քիչ ենք նման, ես ուրիշ կերպ կ՚վարուեմ, եթէ ինձ այդպէս կ՚ստորացնեն։

ԼԻԶԷԹ. Ի հարկէ, այդ անպիտան վարմունք է։ Մի՞թէ Տաճկաստանումն ենք ապրում, ուր կանանց տանը փակում և ինչպէս ասում են, ստրուկների տեղ են ընդունում։ Հենց այդ է պատճառը, որ Աստուած անիծել է այդ ազգին։ Գիտէք, պարոն, մեր ձեռից ամէն բան կ՚գայ, եթէ ամէն մի քայլում հսկում լինեն մեզ վրայ։ Կարծում էք որ այն բոլոր նախապատրաստութիւնները կա-

րող են զգուշացնել մեզ, եթէ մենք մի բան վճռել ենք կատարելու: Ո՛չ, սիրելիս, եթէ մտքներումս մի բան դրինք, այն ժամանակ որքան էլ խորամանկ մարդ լինի յիմարացնելու եղանակը գիտենք: Մեզ վրայ հսկելը էջի մարտիրոսութիւն է: Իմ կարծիքով, ամենալաւ միջոցը հաւատ ընծայելն է. բայց ով որ մեզ նեղացնում է իր համար վտանգ է պատրաստում: Մեզ պահպանում է մեր ազնուութիւնը, ուրիշ ոչ ոք: Բայց եթէ մեզ չափ ու սահմանի մէջ են դնում, դրանով մեր մէջ ցանկութիւն են ծնեցնում դէպի արգելուածը: Եթէ իմ ամուսինն էլ նոյնպէս վարուէր, անպատճառ կ'աշխատէի նրա կասկածը իրականացնել:

ՍԳԱՆ. (Արիստին): Ահա, գեղեցիկ խօսակցութիւն կանանց կրթութեան կանոնից: Դու էլ խաղաղ սրտով բոլորը լսում ես:

ԱՐԻՍՏ. Եղբայր, թէեւ նրա խօսակցութիւնը խիստ ուշադրութեան արժանի չէ, բայց ճշմարտութիւն կայ մէջը: Կանայք մասամբ ազատ պէտք է լինին. բայց դժուար թէ միայն խստութեամբ կարելի լինէր նրանց բարոյականութիւնը պահպանել: Լաւ ապագայ չէ խոստանում այն առաքինութիւնը, որ պահպանվում է կողպէքների տակ: Ո՛չ թէ խստութիւնը, այլ պարտաճանաչութիւնը պէտք է կնոջ պահպանէ: Բայց դու կարծում ես որ, կինը այն ժամանակն է ազնիւ մնում, երբ խլում են նրանից գրաւուելու բոլոր միջոցնե՛րը: Զո՛ւր աշխատանք: Իմ կարծիքով, ամենալաւ միջոցը նրա սրտի վրայ ներգործելն է: Ես երբէք պատիւս ապահոված չեմ համարել, եթէ նրա վրայ հսկելիս լինի մի անձ, որ արգելում է ամէն ցանկութիւն. այստեղ պէտք է կարծել, որ նա էլ մի յարմար դէպք փնտրելով՝ պիտի խաբէ իր վրայ հսկողին:

ՍԳԱՆ. Այդ բոլորը դատարկ բաներ են:

ԱՐԻՍՏ. Թո՛ղ այդպէս լինի: Բայց ես էլ այն եմ ասում, որ երիտասարդութեան կատակով պէտք է կրթել ու բարոյական խիստ միջոցներով չվախեցնել. գոնէ ինչ որ Լէոնօրային է վերաբե-



րում՝ միշտ այդ կարծիքին եմ: Նրա արած սխալը երբէք կանոնից դուրս չեմ համարում և միշտ երիտասարդական ցանկութիւնները ուրախութեամբ եմ կատարում. փառք Աստուծոյ որ չեմ էլ զղջացել: Ես չեմ արգելում նրան խնճոյքներ և թատրոններ յաճախելու համար. էլ ինչ խօսք կայ, որ սրանք են երիտասարդներին զարգացնում: Ապրելու եղանակը աւելի շուտ աշխարհի ուսումնարանումն է սովորվում, քան թէ գրքեր կարդալուց: Նա փող է մսխում զարդերի, ժապաւէնների և կանանց հագուստին յատուկ իրերի վրայ. այս բոլորը շատ բնական լինելով՝ ես էլ առատ տալիս եմ. մեզ պէս հարուստ և աշխարհում լաւ անուան տէր մարդիկ ինչպէս թողնեն ու լռեն: Թէեւ նրա հանգուցեալ հօր կամքով պարտաւորուած եմ ամուսնանալ, բայց չեմ կամենում այդ իրաւունքը բարբարոսաբար գործ դնել: Ես լաւ եմ հասկանում, որ մենք հասակակից չենք, և ուրեմն համարձակ կարող է ուրիշն ընտրել, բայց եթէ չորս հարիւր հազար էկ զո՛ւտ արդիւնքը, իմ շողոքորթութիւնները և բարեկամական հոգատարութիւնը ազդեցին նրա վրայ, այն ժամանակ պատրաստ եմ ամուսինը լինելու, իսկ եթէ ոչ—կարող է ուրիշն ընտրել: Ես շատ ուրախ կ'լինեմ, եթէ նա առանց ինձ էլ բախտաւոր կ'լինի: Շատ ցանկալի է, որ նա իրա կամքով ուրիշի կին կոչուի, քան թէ ակամայ իմը լինի:

ՍԳԱՆ. Օհ, այդ խօսքերը մեղրի չափ քաղցր են:

ԱՐԻՍՏ. Վերջապէս, իմ համոզմունքը այդպէս է. դրա համար շնորհակալ եմ երկնքից: Երբէք չեմ հետեւիլ այն բռնութիւններին, որոնց հետեւանքն է երեխաներին ստիպեցնել ծնողների եր-կարատև բռնութեան տակ:

ՍԳԱՆ. Փոքր ժամանակից բարձի թողի արայ, և եթէ ապրելու եղանակն էլ որ փոխուեց, դու ե՛կ ու վերջը տե՛ս:

ԱՐԻՍՏ. Ինչու այդպէս ենթադրենք:

ՍԳԱՆ. Բան է պատահեց:

ԱՐԻՍՏ. Թող……

ՍԳԱՆ. Բայց եթէ ամուսնացար՝ կինդ դառաւ ու վերջը նոյն ազատութիւնը կամեցաւ։

ԱՐԻՍՏ. Այդպէս էլ կանի։

ՍԳԱՆ. Ուրեմն, առանց յօնքերդ հաւաքելու թոյլ կ'տաս, որ նա ժապաւէններ գործածէ։

ԱՐԻՍՏ. Ինչու չէ։

ՍԳԱՆ. Սիրտդ հանգիստ կ'լինի, երբ խնճոյքներ և երեկոյթներ յաճախէ։

ԱՐԻՍՏ. Ի հարկէ։

ՍԳԱՆ. Երիտասարդ սիրեկաններ էլ կ'ընդունի՞ս։

ԱՐԻՍՏ. Ի՞նչ ամօթ բան է։

ՍԳԱՆ. Որոնք նրա շուրջը պտտելով ընծաներ կ'տան։

ԱՐԻՍՏ. Թող տան։

ՍԳԱՆ. Եւ կինդ էլ պիտի ընդունէ՞ սիրալիր խօսքեր։

ԱՐԻՍՏ. Շատ գեղեցիկ կերպով։

ՍԳԱՆ. Դու էլ այս բոլորի վրայ խաղաղ սրտով պիտի նայես։

ԱՐԻՍՏ. Փառաւորապէս։

ՍԳԱՆ. Ահ, կորիր։ Ծերացել ես՝ խելքդ գլխիցդ թռել է։ (Իզաբէլլին) Հեռացիր, որ այս լիրբ խօսքերը չլսես։

## ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԱՐԻՍՏ. ՍԳԱՆԱՐԷԼ, ԼԵՕՆՈՐԱ, ԼԻԶԵԹ.

ԱՐԻՍՏ. Ես կնոջս ազնուութեան վրայ վստահ կ'մնամ և իմ համոզմունքներս անփոփոխ կ'պահեմ։

ՍԳԱՆ. Ա՜խ, ինչ սրտոտ կ'լինէր, եթէ նա զարդարուն խօսքերով նրան խաբէր.



ԱՐԻՍՏ. Ապագայի վրայ ոչինչ չունեմ ասելու և չգիտեմ թէ ճակատագիրը ինչ է որոշել, և եթէ դու հեռանաս էլ զարգերից, ոչինչ արդիւնք չես վաստակի, որովհետև բոլոր հոգսերիդ ուղղութիւնը էլի այն կողմն է թեքվում։

ՍԳԱՆ. Ծիծաղիր, ծիծաղիր, զուարճախօս։ Ա՜հ, ինչ հետաքրքիր կ'լինէր վաթսուն տարեկան ծաղրածուին զարդարուած տեսնել։

ԼԵՕՆՈՐԱ. Թոյլ տուէք ասելու, որ եթէ ճակատիս գրուած է որ եղբօրդ կինը պիտի լինեմ, այն ժամանակ խօսք եմ տալիս, որ յոյսը բոլորովին ինձ վրայ դնէ. բայց թէ կինդ լինեմ, այդ մասին վստահ չեմ պատասխանելու։

ԼԻԶԵԹ. Ի հարկէ, մենք նրանց պատիւն ենք պահում, ովոր մեզ հաւատում է. իսկ ձեզպէսներին անհասարակ միշտ խաբում են—այդ այնպէս հասկանալի է, ինչպէս երկու անգամ երկու—չորս։

ՍԳԱՆ. Կորէք դուք, չար լեզուներ ու դատարկ գլուխներ։

ԱՐԻՍՏ. Ցտեսութիւն, եղբայր։ Խորհուրդ եմ տալիս, որ բնաւորութիւնդ փոխես. լաւ իմացիր, որ կանանց փակ կեանք վարել տալը վատ հետևանք է ունենում։ Խոնարհ ծառայ եմ։

ՍԳԱՆ. Ո՜ր, չկարծես թէ ես էլ քոնը կ'լինեմ։

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՍԳԱՆԱՐԷԼ (մենակ)։ Օ՜, կարծես բոլորն էլ մի մեքենայից լինեն դուրս եկած։ Այս քեզ ընտանիք. մի յիմար՝ փտած մարմնով ծեր իրան մեծ բան է կարծում՝ կանանց հաճոյակատար լինելու համար. մի կոտրատուող աղջիկ տանուտէր և լիրբ ու անամօթ աղախին. ու ինչպէս տեսնում եմ այստեղ աստուած էլ իր բանականութիւնը կ'կորցնէ, ուր մնաց նրանց խելքի բերէ։ Ինչպէս տեսնում եմ, այսպիսի ամբոխը Իզաբէլլիս առաքինութիւնը կ'ոչնչացնէ։

Բայց ես այնքան յիմար չեմ. իսկոյն գիւղը կուղարկեմ, որ այնտեղ կաղամբը պահպանի և հնդուհաւեր արածացնի։

## ՏԵՍԱՐԱՆ Ե.

### ՎԱԼԵՐ, ՍԳԱՆԱՐԷԼ, ԵՐՀԱՍՏ

ՎԱԼԵՐ. (բեմի խորքում)։ Նայիր Երհաստ, ահա այն անտանելի շաշը (argus), որ հսկում է իմ պաշտելի էակի վրայ։

ՍԳԱՆ. (իրան մենակ կարծելով) Սրանց վարքը ինչ ապականուած է։ Այդ աններելի է։

ՎԱԼԵՐ. Անպատճառ պէտք է մօտենամ, ծանօթանամ նրա հետ։

ՍԳԱՆ. (վալերին չնկատելով)։ փոխանակ ամէն տեղ խիստ հսկողութեան տակ պահելու, որից երբեմն շատ ազնիւ մարդիկ էին դուրս գալիս, իսկ հիմա երիտասարդութիւնը ձգտում է դէպի ազատութիւն, բարձի թողի է կամենում շրջել, ոչինչ չէ կամենում հասկանալ....

(Վալերը հեռուից Սգանարէլին գլուխ է տալիս)

ՎԱԼԵՐ. Նա չէ նկատում ինձ։

ԵՐԱՍՏ. Երևի ծուռ աչքերը հակառակ են նայում։ Անցնենք աջ կողմը.

ՍԳԱՆ. (Չնկատելով հիւրերին)։ Շուտով փախչեմ; այս տեսակ կեանք ունենալը.....

ՎԱԼԵՐ. (կամաց մօտենալով) Ինչպէս որ լինի պէտք է ծանօթանամ։

ՍԳԱՆ. (վալերի ձայնը լսելով)։ Հըմ.... կարծես թէ խօսում լինեն (կրկին իրան մենակ կարծելով)։ Էհ, գիւղը որտեղ, այս տեղ որտեղ։ Այնտեղ գոնէ նոր ժամանակի յիմարութիւնները աչքերս չեն տեսնում։



ԵՐՀԱՍՏ. (վալերին) Դ՛է մօտեցէք։

ՍԳԱՆ. (Ձայն լսելով)։ Այս ինչ է։ (Ձայնը ընդհատվում է)։ Կարելի է ականջս է դղրդում։ (Իրան մենակ կարծելով)։ Այստեղ երիտասարդ աղջիկների հետ ժամանակ անցկացնելով՝ ամէն բան սահմանափակում է..... (վալերին տեսնում է գլուխ տալով մօտենում է)։ Դուք ինձ մօտ է՞ք գալիս։

ԵՐՀԱՍՏ. (վալերին)։ Մօտեցիր։

ՍԳԱՆ. (Վալերի վրայ ուշադրութիւն չդարձնելով)։ Այնտեղ ոչ զարդասէր, (կրկին գլուխ է տալիս) ոչ այսպիսի անարգներ.... (միւս կողմն դառնալով, Երհաստին է տեսնում)։ Տէր ողորմեա՛ (Երհաստը գլուխ է տալիս)։ Մէկն էլ։ Այս ինչ է, ամէն կողմից գլուխ են տալիս։

ՎԱԼԵՐ. Պարոն, արդեօք անհանգիստ չարի ձեզ։

ՍԳԱՆ. Շատ կարելի է։

ՎԱԼԵՐ. Ներողութիւն։ Բայց ես շատ կ՚ցանկայի ձեզ հետ ծանօթանալ, այդ բաւականութիւնը ունենալու համար՝ վճռեցի շնորհ բերել ձեզ մօտ։

ՍԳԱՆ. Գուցէ։

ՎԱԼԵՐ. Եթէ թոյլ տաք, մեծ բաւականութեամբ ձեզ մօտ կ՚այցելեմ և ձեզ հետ բարեկամանալու իրաւունքը ստանալուց յետոյ՝ միշտ ծառայ եմ։

ՍԳԱՆ. Երևակայում եմ։

ՎԱԼԵՐ. Բախտաւորապէս ձեր ամենամօտ բարեկամը կ՚լինեմ. որովհետև մի պատ է մեր սահմանը։

ՍԳԱՆ. Այդ լաւ է։

ՎԱԼԵՐ. Բայց, պարոն, մի շատ նոր և ճիշտ լուր պալատից եմ բերում։

ՍԳԱՆ. Այդ տեսակ բաների հետ գործ չունեմ։

ՎԱԼԵՐ. Այդ այդպէս է. բայց երբեմն շատ հետաքրքիր ան-

ցքեր են պատահում։ Դուք, պարոն, ի հարկէ կ'կամենայիք տեսնել այն խնձորները, որ պատրաստւում են Դոֆինի *) ծննդեան առիթով։

ՍԳԱՆ. Եթէ ես կամենայի։

ՎԱԼԵՐ. Ասում են որ, Փարիզը այնպիսի խնձորներ է պատրաստում, որոնք ուրիշ տեղ հազուագիւտ են։ Իսկ նահանգներում մենակ ձանձրալի է։ Ինչպէս էք ժամանակ անցկացնում։

ՍԳԱՆ. Գործերով եմ պարապում։

ՎԱԼԵՐ. Բայց ուղեղը հանգստութիւն է պահանջում. անդադար աշխատելուց ուղեղը դադարում է։ Երեկոները ինչով էք զբաղուած։

ՍԳԱՆ. Ինչով կամենամ։

ՎԱԼԵՐ. Անկասկած, լաւ է. ոչինչ բան այնքան լաւ և խելացի չէ, որքան ցանկութեան համեմատ գործելը։ Եթէ դուք երեկոները ազատ էք, յուսով եմ որ թոյլ տաք երբեմն այցելելու։

ՍԳԱՆ. Գլուխս աչքիս վրան։

## ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՎԱԼԵՐ, ԵՐՀԱՍՏ.

ՎԱԼԵՐ. Հը, ինչ կ'ասես այս այլանդակ յիմարի մասին։

ԵՐՀԱՍՏ. Նա չէ պատասխանում, այլ քթի տակ փնթփնթում է։

ՎԱԼԵՐ. Ո՜հ, կատաղում եմ։

ԵՐՀԱՍՏ. Դարդա՛կ բան է։

---

*) Դօֆինը, Լիւդովիկոս XIV որդին, Բուրգունդիայի կոմսի հայրը՝ Լիւդովիկոս XV պապը՝ ծնաւ 1661 թ. նոյեմբերի 1-ին «Տղամարդկանց խրատ» առաջին ներկայացումից վեց ամիս յետոյ։ Մոլիէրը այս տողերը յետոյ աւելացրեց։



ՎԱԼԵՐ. Ինչպէս թէ դարդակ։ Արդեօք կարելի՞ բան է, որ հանգիստ մնամ և թողնեմ այն քաղցր էակը, որին պաշտում եմ՝ տգէտ մարդու ձեռքում տանջուելիս, այն վայրենիի ձեռքում, որ հսկում է նրան և վայրկեան անգամ չանգերից բաց չէ թողնում։

ԵՐՀԱՍՏ. Այդ ձեզ համար հեշտ է. այն սէրը, որ դուք էք զգում ապացոյց է գործի յաջողութեան։ Վերջապէս հասկացէ՛ք որ այն շնորհը որ կանայք ամէն քայլում սպասում են ստանալու, արդէն կէսը վաստակած են լինում։ Ամուսինների և հայրերի խստութիւնը սիրական գտնելու ճանապարհն է բաց անում։ Կոկէտութիւնը արհեստ չէ, այդ տաղանդից էլ զուրկ եմ. բայց մինչև այս որսի գտնելը, կարելի է քանի որսորդի մօտ ծառայած լինել. ինձ յաճախ ասել են, թէ աւելի լաւ և օգուտ է խիստ ամուսինների հետ գործ ունենալ, որոնք աղաղակով և հայհոյելով են խօսում կանանց հետ, որ ամէն մէկ քայլ հարց ու փորձ են անում։ Նրանք ասում են թէ հէնց այս է օգտուելու տեղը։ Միայն բաւական է, որ վշտացած անձին քնքոյշ կարեկցութիւն և հոգատարութիւն ցոյց տալ և գործը շատ լաւ կ'գնայ։ Մէկ խօսքով. դուք շատ պիտի ուրախանաք, որ Եղիսաբէթին հսկողը գազան է։

ՎԱԼԵՐ. Այն օրից որ ես սիրել եմ նրան, ահա չորս ամիս է անցել չեմ կարողացել մի խօսք անգամ ասելու։

ԵՐՀԱՍՏ. Ասում են սէրը հնարագէտ է, բայց ոչ ձեզ համար, և եթէ ես լինէի.....

ՎԱԼԵՐ. Ի՞նչ կանէիր, երբ շաշը քայլ անգամ չի հեռանում նրանից, իսկ տանը ոչ աղախիններ և ոչ ծառաներ կան, որոնց մարդ կաշառէր և այսպիսով յարաբերութիւն ունենար։

ԵՐՀԱՍՏ. Ուրեմն նա չգիտէ, որ դուք սիրում էք։

ՎԱԼԵՐ. Այ թէ հանելուկը որտեղ է։ Այն վայրենիի հետ ուր որ գեղեցիկս գնաց, ստուերի պէս պիտի հետևեմ նրան։ Աշ-

խատեցի որքան կարելի է հայեացքներով բացատրել նրան իմ զգացմունքը, բայց չգիտեմ, արդեօք ինձ հասկացա՞ւ:

ԵՐՀԱՍՏ. Ճշմարիտ է, այդպիսի լեզուն միշտ հասկանալի չէ լինում, եթէ նա խօսքերով, կամ սիրահարական նամակներով չէ բացատրուած: Բայց ինչ միջոցով իմաց տանք, որ ես սիրում եմ նրան: Մի միջոց գտիր:

ՎԱԼԵՐ. Այդ գործին մի ընթացք պէտք է տալ: Գնանք տուն և խօսենք դրա մասին:

# ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ

## ՏԵՍԱՐԱՆ Ա.

ԵՂԻՍԱԲԵԹ, ՍԳԱՆԱՐԷԼ:

ՍԳԱՆ. Լաւ. այն նշաններով որ ինձ յաղորդեցիր, գուշակում եմ թէ ով է նա և ուր է բնակւում:

ԵՂԻՍԱԲԵԹ. Ո՛հ, Աստուած իմ, անկեղծ սէրս պահպանիր և յաջողութիւն տուր նրան:

ՍԳԱՆ. Դու ասում ես նրա անունը Վալե՞ր է:

ԵՂԻՍ. Այո, ինձ այդպէս ասացին:

ՍԳԱՆ. Լաւ, հանգիստ կաց, պատմիր բոլորը: Ես այս րոպէիս կ'գնամ ու կ'խելօքացնեմ այն յիմար տղային:

ԵՂԻՍ. (դուրս գնալով). Թէեւ իմ նախագիծը մի ինձ պէս աղջկայ համար յանդգնութիւն է, բայց մի փոքր ի շատէ խելացի մարդ հասկանալով անարդար հարստահարութիւններն ու խստութիւնները, որոնց համը տեսնում եմ, ճշմարիտն եմ ասում, չի մեղադրիլ:



## ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՍԳԱՆԱՐԷԼ (մենակ). (Վալերի դուռը բախելով). Էլ յետաձգելու տեղը չէ: Ա՜ա... դուք այստեղ է՞ք, պարոն Փրանտ: Ես իսկոյն նրան.... Ո՞վ է այդտեղ: Ես: Նա հիմա կերեւայ: Գ.է՜հ, բացարէք: Այդ ո՞վ է: Նա փորձ է փորձում սիրահարական ձեւեր անել, բայց ես յանկարծ վրայ կ'հասնեմ ու......

## ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՎԱԼԵՐ, ՍԳԱՆԱՐԷԼ, ԵՐՀԱՍՏ.

ՍԳԱՆ. (Երհաստին, որը յանկարծ դուրս է թռչում). Անիծուա՜ծ դու: Այ արջ քիչ մնաց ոտս կոտրէիր:

ՎԱԼԵՐ. Ազնիւ պարոն, երբէք չէի սպասում...

1002
5935

ՍԳԱՆ. Ես ձեզ հետ գործ ունիմ:

ՎԱԼԵՐ. Ինձ հե՞տ:

ՍԳԱՆ. Հէնց ձեզ հետ: Մի՛թէ դուք Վալերը չէք:

ՎԱԼԵՐ. Այո:

ՍԳԱՆ. Եթէ բարեհաճէք, ձեզ հետ խօսք ունեմ ասելու:

ՎԱԼԵՐ. Շատ ուրախ եմ: Ինձ կ'պարտաւորեցնէք:

ՍԳԱՆ. Բանը դրանում չէ, կամենում եմ ձեզ մի ծառայութիւն անել. հէնց այդ է նպատակս:

ՎԱԼԵՐ. Ինձ:

ՍԳԱՆ. Այո, ձեզ: Ինչ է, զարմանում էք:

ՎԱԼԵՐ. Ընդհակառակը, շատ հաճելի է:

ՍԳԱՆ. Բանն այդ չէ: Ինձ համար միեւնոյն է:

ՎԱԼԵՐ. Բարեհաճեցէ՛ք ներս մտնել:

ՍԳԱՆ. Աւելորդ է, հարկաւորութիւն չկայ:

ՎԱԼԵՐ. Ինչպէս կամենաք:

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникова
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՍԳԱՆ. Հենց այստեղ էլ լաւ է:

ՎԱԼԵՐ. Ճշմարիտն ասեմ, ինձ համար պատիւ չէ ձեզ այստեղ ընդունելը:

ՍԳԱՆ. Ոչ, չեմ կարող գալ:

ՎԱԼԵՐ. Շատ ցաւում եմ: Եթէ դուք այդպէս յամառ էք, ուրեմն, կ՚հրամայեմ աթոռ բերեն:

ՍԳԱՆ. Կանգնած էլ կարող եմ խօսել:

ՎԱԼԵՐ. Բայց անյարմար է....

ՍԳԱՆ. Օ՜հ, հոգիս հանեցին էլի՛:

ՎԱԼԵՐ. Ներողութիւն: Քաղաքավարութիւնը այդպէս է պահանջում: Ուրեմն բերանս կարե՞լ տամ:

ՎԱԼԵՐ. Հրամեցէ՛ք, լսում եմ:

ՍԳԱՆ. Շատ լաւ էք անում:

ՎԱԼԵՐ. Սրտով ցանկանում եմ ձեր կամքը կատարել:

ՍԳԱՆ. Լսեցէք խնդրեմ, գիտէք որ ես մի երիտասարդ աղջկայ վրայ հոգաբարձու եմ, որը ձեր բնակարանին մօտ է կենում և անունը Եղիսաբէթ է:

ՎԱԼԵՐ. Այո:

ՍԳԱՆ. Ուրեմն, եթէ ճանաչում էք էլ աւելորդ է խօսելը: Բայց ձեզ յայտնի է, որ նա ինձ հետ աւելի մօտ յարաբերութիւններ ունի և որ պատիւ ունի կինս կոչուելու:

ՎԱԼԵՐ. Այդ իմ գործս չէ:

ՍԳԱՆ. Այսպէս թէ այնպէս, պատիւ ունեմ յայտնելու, որ աւելի լաւ կ՚լինի անհանգիստ չանէք նրան և հրաժարուէք նրան գրաւելու դիտաւորութիւնից:

ՎԱԼԵՐ. Ինչպէ՞ս, ինձ էք ասում, պարոն:

ՍԳԱՆ. Այո, ձեզ: Կեղծաւորութիւն հարկաւոր չէ:

ՎԱԼԵՐ. Ո՞վ ասաց, որ նա ինձ հետաքրքրում է:

ՍԳԱՆ. Նա, որին միայն կարելի է հաւատալ:



ՎԱԼԵՐ. Բայց ո՞վ:

ՍԳԱՆ. Նա:

ՎԱԼԵՐ. Նա՞:

ՍԳԱՆ. Այո: Կարծեմ այդ էլ բաւական է: Նա, ազնիւ աղջիկը, որ փոքրութիւնից մեծ համարում ունէր ինձ վրայ, կարո՞ղ էր արդեօք ինձ հաւատ չընծայել: Մինչև անգամ պնդում էր որ ձեզ իմացնեմ, թէ ձեր հայեացքների և զգացմունքների նպատակը հասկանում է նա, ուստի ներողութիւն չքաշէք հայեացքներով բացատրել նրան ձեր միտքը: Այդ բանը վիրաւորում է ինձ, որովհետև նա սիրում է:

ՎԱԼԵՐ. Այդ խօսքերը նա՞ է ասացել:

ՍԳԱՆ. Այո, նա: Էլ ինչ գլուխ ցաւացնեմ, կարճ կտրեմ. ձեր զգացմունքը նրա համար հանելուկ չէ, դրա մասին այս րոպէիս կամենում էր յաղորդել: Սրանից արդէն կարողէք գուշակել, որ նրա սիրտը միայն բաց է ինձ համար և ինձ է պատկանում, ուրեմն զուր էք նարօտաւելի հայեացքներով հետևում: Ցտեսութիւն: Ամէն բան վերջացաւ:

ՎԱԼԵՐ. (կամաց Էրհաստին): Արի ու բան հասկացիր:

ՍԳԱՆ. (մի կողմ): Լաւ նեղ տեղն եմ ձգել:

ԷՐՀԱՍՏ. (կամաց Վալերին): Ինչպէս տեսնում եմ, ձեր գործը լաւ է գնում: Այստեղ մի խաբէութիւն կայ: Այդ բոլորը ձեզ ասացին, ինչպէս երևում է, ոչ թէ հետևելուն արգելելու համար, այլ յորդորելու:

ՍԳԱՆ. (ինքն իրան): Պէտք է որ խելքի եկած լինի:

ՎԱԼԵՐ. (կամաց Էրհաստին): Այդպէս ես կարծում...

ԷՐՀԱՍՏ. (կամաց): Այո: Բայց կարելի է լսի: Գնանք:

## ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՍԳԱՆԱՐԵԼ. (մենակ): Նա, կարծեմ, յոյս չունէր այս տեսակ

խօսքեր լսելու: Մինչև անգամ դէմքը ծամռուեց: Իսկոյն բոլորը Եղիսաբէթին կ՚պատմեմ: Ահա կանոններիս բարի հետևանքը, որոնցով կրթել եմ Նրան: Միայն երիտասարդի անհամեմատ հայեացքները փչացնում են Նրան:

## ՏԵՍԱՐԱՆ Ե.

ԵՂԻՍԱԲԷԹ, ՍԳԱՆԱՐԵԼ

ԵՂԻ. (կամաց սենակը մտնելով)․ Կասկածում եմ, որ նա սէրից կուրանայ ու չհասկանայ, թէ ինչու եմ ուղարկել: Բայց բանտարկուած լինելով, յայտնի բան է, նպատակիս հասնելու համար ծառայիս պիտի ուղարկէի:

ՍԳԱՆ. Ահա ես էլ եկայ: Յանձնարարութիւնը կատարել եմ:

ԵՂԻ. Հը, ինչ կայ:

ՍԳԱՆ Ամէն բան պատմեցի և մեծ ազդեցութիւն արաւ: Առաջ ուրանում էր, թէ չէ հասկանում, բայց երբ իմացաւ Եղիսաբէթի խօսքով եմ եկել, իսկոյն լռեց և այնպէս շփոթուեց, որ, ի հարկ է, էլ յետևից չի ընկնի:

ԵՂԻ. Ախ, տէր Աստուած, ինչպէս սխալուել էք: Ընդհակառակը, նա այժմ նոր որոգայթ կ՚լարէ ինձ համար:

ՍԳԱՆ. Ինչի՞ ես այդպէս մտածում:

ԵՂԻ. Հէնց որ դուք դուրս գնացիք, իսկոյն պատուհանին մօտեցայ թէ չէ, մէկ էլ տեսնեմ մի մարդ Սալերի կողմից բարևներ տուեց՝ յետոյ յանկարծ մի արկղիկ ձգեց լուսամուտից: Նրա մէջ կնքուած նամակ կար: Շփոթուած վերցրի, որ այն րոպէին տամ, բայց արդէն հեռացել էր: Չ՚լսած յանդգնութիւն:

ՍԳԱՆ. Ա՜յ խաբեբայ, բան է մոգոնել:

ԵՂԻ. Պէտք է իսկոյն դարձնել այն յանդգնի նամակը, բայց չգիտեմ ում յանձնեմ, չեմ էլ համարձակվում ձեզ անհանգիստ անել…



ՍԳԱՆ. Չ՚եմ կարծում, հոգիս: Այդ ապացոյց է, որ դու ինձ սիրում և հաւատում ես: Ընդհակառակը, ուրախութեամբ կ՚կատարեմ յանձնարարութիւնդ: Դրանով սիրտս ուրախացրիր:

ԵՂԻ. Ուրեմն, համեցէք:

ՍԳԱՆ. Տեսնենք ինչ է գրել:

ԵՂԻ. Ահ, ոչ, ոչ:

ՍԳԱՆ. Ինչո՞ւ:

ԵՂԻ. Նա կ՚կարծէ թէ ես եմ բացարել: Միթէ մի լաւ կրթուած օրիորդ պէտք է այնքան հետաքրքիր լինի, որ մի որ և իցէ երիտասարդի ձգած նամակ կարդայ: Այդ նշանակում է համակրել և պատրաստ լինել Նրա բոլոր ցանկութիւնները կատարելու: Ո՛չ, այս Նամակը պէտք է առանց բացանելու ստանայ: Այն ժամանակ նա կ՚իմանայ, որ ատում ու արհամարում եմ: Նա յայտնի կ՚տեսնէ, որ ինձ վրայ մտածելը զուր է:

ՍԳԱՆ. Ճշմարիտ է: Դատողութիւնդ հիմնաւոր է: Բոլորովին համաձայն եմ: Համեստութիւնդ և խոհեմ խօսքերդ զմայլեցնում են ինձ: Ինչպէս երևում է, խրատներս անպտուղ հողի վրայ չեն ցանած: Այժմ համոզուած եմ, որ արժանի ես կինս կոչուելու:

ԵՂԻ Այնուամենայնիւ չեմ համարձակւում ցանկութեանդ դէմ կենալ, նամակը ձեր ձեռքին է, կամենաք, կարդացէք:

ՍԳԱՆ. Ամենևին ոչ: Դու լաւ ես ասում: Ասածիդ պէս կանեմ: Շատ դժուար բան է չորս քայլ անե՞լը: Ես իսկոյն կ՚վերադարնամ ու կ՚հանգստացնեմ քեզ:

## ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՍԳԱՆԱՐԵԼ (մենակ)․ Շատ ուրախանում եմ, որ Նրա մէջ մի խոհեմ օրիորդի պատկերն եմ տեսնում: Տանը մի այսպիսի ազնիւ զգացմունքներով և ճշմարիտ կին ունենալը մեծ բախտ է: Նա

մարդկանց անհամեմատ հայեացքներից վիրաւորվում է, թողնենք դեռ նամակները։ Նա ինձ գանգատում է։ Հետաքրքիր է իմանալ, արդեօք սիրելի եղբօրս փայփայածներն նոյնը կ'անէր։ Բայց չէ՛ որ «ինչ որ ցանես, այն էլ կ'հնձե՞ս»։

վալերի դրան բախում է) Եկ։

## ՏԵՍԱՐԱՆ Է։

### ՍԳԱՆԱՐԵԼ, ԵՐՀԱՍՏ

ԵՐՀԱՍՏ. Ո՞վ է։

ՍԳԱՆ. Ա՛ռ, պարոնին տուր։ Այս որ էլ նեղութիւն չքաշի նամակ գրի, նամակները կարծածին պէս չեն ընդունվում։ Թո՛ղ տեսնէ, որ նա մինչև անգամ բաց չէ արած։ Թո՛ղ նա լաւ հասկանայ, թէ սիրհարական նամակները ինչպէս են ընդունվում։

## ՏԵՍԱՐԱՆ Ը։

### ՎԱԼԵՐ, ԵՐՀԱՍՏ.

ՎԱԼԵՐ. Ի՞նչ տուեց այն արջը։

ԵՐՀԱՍՏ. Նամակը արկղիկումն է։ Ասում է, որ իբր թէ դուք Իզաբէլին էք ուղարկել և նա էլ դարձնում է առանց բացանելու։ Համոզուելու համար, կարդացէ՛ք նամակը։

ՎԱԼԵՐ. (կարդում է)։ «Իմ վարմունքը ձեզ շատ կ'զարմացնի։ Ձեզ շատ համարձակ կ'թուի ինչպէս իմ նամակը՝ նոյնպէս և ձեզ հասցնելու եղանակը. ես այնպիսի դրութեան մէջ եմ, որ ընտրութիւն անելը շատ ուշ կ'լինի։ Վեց օրից յետոյ ինձ սպառնում է ահալի, ստիպողական ամուսնութիւն. ուստի աշխատում եմ ամէն ջանք գործ դնել՝ միայն դժբախտութիւնից ազատուելու համար։ Իմ ճարս դու ես, միայն դիմում եմ քեզ յուսալով որ կազատես ինձ։ Խնդիրքս պարտք չհամարես։ Պէտք է քեզ ունեցած զգացմունքս, բա-



շած հարստահարութեանս հետևանքը չէ, այլ թէ ստիպեցին արտայայտել այն՝ ինչոր ուրիշ հանգամանքում չէի համոզուիլ։ Երբեմն հանգամանքը մեր կամքին յաղթում և ստիպում է համեստութեան սահմանից դուրս գալ, այդ յատուկ է մեր սեռին։ Այսպէս, թէ այնպէս, բախտաւորութեանս յաջողութիւնը ձեզանից է կախուած. ես ձերն եմ։ Եթէ սրտով սիրում էք ինձ յայտնեցէք ձեր վճիռը։ Յիշեցէք միայն այն՝ որ սպառնող թշուառութիւնը մօտ է և որ փոխադարձ ճշմարիտ սիրողներին միայն մի քանի խօսք է հարկաւոր մի միանց հասկանալու համար»։

ԵՐՀԱՍՏ. Տեսնում ես Օրիորդը գործը ինչ հնարքով է տանում։ Ուրեմն, սիրոյ հետ, ուղիղ որ, խորամանկութիւն էլ է հարկաւոր։

ՎԱԼԵՐ. Օ՛հ, քաղցր Իզաբէլ։ Երջանի՜կ եմ։ Միայն այդ տեսակ ճարպիկ խորամանկութիւնից երևում է, որ նա սիրում և հաւատում է։ Այն զգացմունքները, որ արտացոլեց նրա արտաքին տեսքը, այժմ աւելի սաստկացան նրա յատուկ բարոյականութիւնից։

ԵՐՀԱՍՏ. Տեսէ՛ք, այն միամիտը էլի գալիս է, զգոյշ եղէք, խօսք չթացնէ՛ք։

## ՏԵՍԱՐԱՆ Թ.

### ՍԳԱՆԱՐԵԼ, ՎԱԼԵՐ, ԵՐՀԱՍՏ.

ՍԳԱՆ. (կարծելով թէ մենակ է)։ Ո՛հ, ինչ բարեխէր հրաման է, որ հագուստի զարդը արգելվում է։ *) Այս հրամանը մարդկանց ծախսը թեթևացնում՝ սանձահարում է կանանց շռայլութեանը։ Այս օրէնքի համար թագաւորին երկար օրեր եմ ցանկանում։

---

*) 1660 թ. Կայսերական հրովարտակը արգելում է հագուստների և կառքերի շռայլ զարդերը։

Լաւ կ'լինէր, որ այդ իմաստուն հրամանը ժապաւէնների, ասեղնա- գործ շորերի, յիմար կօկէտների յատուկ զարդարինքն էլ վերաբերէր։ Իսկոյն գնամ մի հատ առնեմ այդ օրէնսգրքից և թող Եղիսաբէթը ուրախութեամբ կարդայ։ Այժմ լաւ ժամանակն է, գնամ։ Ճա- շից յետոյ զուարճանալու համար՝ կ'կարդանք։

(Վալերին նկատելով)։

Չ'լինի թէ պատրաստւում էք, երիտասարդ, մի սիրահարա- կան նամակ ուղարկել ոսկէ արկղիկի մէջ։ Դուք կարծեմ են- թադրում էիք, թէ մի խաբէական և սիրահարական անցքերին հմուտ երիտասարդ կօկէտի էք պատահել, բայց դժբախտաբար սխալուել էք։ Ձեր նամակը սպասածիդ պէս չընդունուեց։ Ու- րեմն ձեր մարդկոցները այնքան աչալի չեն, երիտասարդ պարոն։ Դուք համոզուեցիք, կարծեմ, այն օրիորդը խոհեմ է և սիրում է ինձ և որ ձեր ծանօթութիւնը վիրաւորում է նրան։ Նեղութիւն քաշէք ձեր սխրագործութիւնների համար մի ուրիշ ասպարեզ որո- նելու։

ՎԱԼԵՐ. Բոլորովին համաձայն եմ. ձեր արժանաւորութիւն- ների դէմ դժուար է մրցելը։ Յիմարութիւն կ'լինէր իմ կողմից, եթէ աշխատէի գրաւել Եղիսաբէթի սիրտը։

ՍԳԱՆ. Այո, ճշմարիտ որ յիմարութի՛ւն։

ՎԱԼԵՐ. Ո՛հ, եթէ իմանայի, որ մի այսպիսի հզօր ոսոխի եմ պատահելու, իսկոյն կ'զսպէի զգացմունքիս, որ չափից չ'անցնի։

ՍԳԱՆ. Յայտնի բանէ։

ՎԱԼԵՐ. Ուրեմն, հրաժարւում եմ յոյսերիցս և անտրտունջ հնազանդւում բախտիս։

ՍԳԱՆ. Շատ խելացի է։

ՎԱԼԵՐ. Ի՞նչ արած։ Բախտը այնպիսի հազուագիւտ արժա- նաւորութիւններ է տուել ձեզ, որ միայն պէտք է ուրախանամ Եղիսաբէթի գեղեցիկ ընտրութեան վրայ։



ՍԳԱՆ. Ի հարկէ։

ՎԱԼԵՐ. Բայց որովհետև իբր յաղթող վեհանձն մէկը պիտի լինէք, ուստի խնդրում եմ միայն քաղցր վարմունք։ Աստուծու սի- րոյն, օրիորդ Եղիսաբէթին յայտնեցէք, որ աչա երեք ամիս է նրան սիրում եմ, բայց զգացմունքս և նպատակներս անարատ են և նրա պատիւը ինձ համար սուրբ։

ՍԳԱՆ. Կ'ասեմ։

ՎԱԼԵՐ. Իմ միակ ցանկութիւնս նրա ամուսին կոչուելս է, եթէ որ ճակատագիրը և դուք, որ կաշկանդել էք նրա սիրտը, արգելք չլինէիք կամքիս։

ՍԳԱՆ. Այդ էլ կ'ասեմ։

ՎԱԼԵՐ. Եւ որ, ինչ որ էլ լինի, միշտ քաղցր է նրա յիշա- տակը։ եթէ բանէ չարժանացայ ամուսին կոչուելուն, այդ նշանա- կում է ձեր վերին աստիճանի արժանաւորութիւնը արգելք եղաւ։

ՍԳԱՆ. Շատ իմաստուն է։ Բոլորը կ'պատմեմ։ Այս խօսքե- րի մէջ ոչինչ վիրաւորիչ բան չկայ։ Բայց խորհուրդ եմ տալիս, որ այդ բոլորը ձեր մտքից հանէք։ Մնաք բարև։

ԷՐՀԱՍՏ. (Վալերին)։ Դուք, կարծեմ, թունաւորեցիք այն յի- մարին։

## ՏԵՍԱՐԱՆ Ժ.

ՍԳԱՆԱՐԷԼ. (մենակ) Անուամենայնիւ ցաւում եմ։ Խեղճը խիստ կապուել է։ Բայց բանն այն է, որ մտածում է այն տեղը բռնել, ուր արդէն բռնել եմ։

(Եղիսաբէթի դրան բախում է։)

## ՏԵՍԱՐԱՆ ԺԱ.

ՍԳԱՆԱՐԷԼ, ԵՂԻՍԱԲԷԹ։

ՍԳԱՆ. Կարծեմ, երբէք մի սիրահար այնքան չի վրդովւուի,

որքան այն երիտասարդը համակուել։ Նա բոլորովին յոյսը կտրել է, և միայն խնդրեց հաղորդեմ, որ նա շատ ժամանակ է ազնիւ սիրով սիրում է, որ նա քո ամուսինը կ՚լինէր, եթէ ես արգելք չ՚լինէի։ Նա երբէք չի մոռանայ՝ ու միշտ կ՚սիրի, իսկ եթէ չարժանացաւ այդ նպատակին, այն էլ միայն ինձ պատուելու համար է։ Այս է նրա խօսքերը։ Նա բոլորովին շփոթեց ինձ իր ազնիւ ու սրտակից խօսքերով։ Շատ ցաւեցի նրա վրայ։

ԵՂԻ. (կամաց) Ես էլ չէի կասկածում նրա զգացմունքների վրայ։ Նրա հայեացքն ու դէմքը ապացոյց են որ դիտաւորութիւններն ազնիւ են։

ՍԳԱՆ. Ինչպէս։

ԵՂԻ. Ինձ համար անտանելի է մի այնպիսի մարդու մասին ցաւակցութիւն լսել, որին գրողի չափ ատում եմ, և եթէ անկեղծ է մեր սէրը, ուրեմն երկուսիս համար էլ զուր է նրա տանջանքը։

ՍԳԱՆ. Բայց նա չգիտէր դու սրտով ուրիշին ես պատկանում, իսկ ինչ որ ազնւութեան է վերաբերում.....

ԵՂԻ. Հիմնալի՜ դիտաւորութիւն—որի՛րդ տանել։ Ձեր կարծիքով ազնւութիւն է ինձ հետ պսակուելու համար նախագիծ կազմել և ուժով ձեռքից խլելը։ Ինչ՛ աղջիկ եմ, որ այս տեսակ անազնւութեան համբերեմ։

ՍԳԱՆ. Ինչպէս թէ խլել։

ԵՂԻ. Այո՛, ասացին. որ այն անպիտանը կամենում է ինձ յափշտակել։ Չգիտեմ ո՞րտեղից է իմացել, թէ մեր հարսանիքը ութ օրից յետոյ է. Գուցէ երէկ որոշուեց այդ բանը։ Բայց նա կամենում է սաստել և նախագիծը բոլորովին քանդել։

ՍԳԱՆ. Բան չ՚ունես։

ԵՂԻ. Տեսէ՛ք, ի՛նչ ազնիւ մարդ է. Կամենում էր....

ՍԳԱՆ. Շատ կ՚սխալուի. Ծիծաղելի դիտաւորութիւն, աւելի ոչինչ։



ԵՂԻ. Այո, ձեր ներողամտութիւնն պահպանում է նրա յոյսը։ Եթէ դուք ուրիշ կերպ խօսէիք, այն ժամանակ կ՚զգուշանար և լաւ կ՚հասկանար զգացածներս։ Նամակը տարած օրից նա սկսել է նոր հնարներ որոնել։ Ինչպէս ասում են, հաւատացած է մինչև անգամ, որ իբր թէ համակրում եմ նրա զգացմունքներին և ձեզանից ազատուելու համար, մասնակցելու եմ նրա նախագիծը իրագործելու համար։

ՍԳԱՆ. Նա յիմար է։

ԵՂԻ. Ոչ նա շատ ճարպիկ է ձևանում ձեր առաջ, խաբել է կամենում։ Իսկ դ՚ուք նրա կեղծ խօսքերին հաւատում էք։ Բոլորովին թըշուառ կին եմ։ Միջոց չունեմ գոնէ այն յանդգնի առաջը առնելու, որից միշտ նորանոր խայտառակութիւններ կրելով տանջվում եմ։

ՍԳԱՆ. Հանգիստ կաց։

ԵՂԻ. Եթէ դուք չպաշտպանէք կեանքս, այն ժամանակ էլ չեմ կարող համբերել. ես գիտեմ թէ ինչ կանեմ.....

ՍԳԱՆ. Հանգարտուիր կինս, ես իսկոյն կ՚գնամ ու մի լաւ խաղ կ՚խաղամ նրա գլխին։

ԵՂԻ. Եթէ նա, բանն է, այն յանդուգն դիտաւորութիւնից ձեռ չ՚վերցնի, խնդրեմ ասացէք նրան, որ տեղովդ սուտես, դիտաւորութիւնդ լաւ եմ հասկանում։ Եւ իրա նախագծի անկարելիութիւնը հաստատելու համար, ասացէք որ ես ինքս հրաւիրում եմ, թող փորձ փորձի ինձ յափշտակի։ Եւ եթէ չէ կամենում դժբախտութեան հանդիպել, թո՛ղ նոյն բանը երկրորդ անգամ կրկնել չ՚տայ։

ՍԳԱՆ. Լաւ, շատ լաւ։

ԵՂԻ. Բայց նայեցէք նրա առաջ քաղցրութեամբ չխօսէք, այնպէս խօսեցէք որ համոզուի։

ՍԳԱՆ. Ոչինչ չեմ մոռանայ, միամիտ կաց։

ԵՂԻ. Դէ՛, գնացէք, անհամբերութեամբ կ՚սպասեմ ձեզ։

Դուք չգիտէք թէ առանց ձեզ_ րոպէները ինչպէս ուշ են անցնում:

ՍԳԱՆ. Ինչ սիրուն ես, մի՛ տխրիր հոգիս, իսկոյն կ'գամ:

### ՏԵՍԱՐԱՆ ԺԲ.

ՍԳԱՆԱՐԷԼ. (մենակ) Դժուար թէ մի այսպիսի լաւ ու շնորհալի աղջիկ ճարուի: Այս գանձը Աստուած է ուղարկել ինձ համար: Մի կին, որ համակամ է: Ճշմարիտ որ հազուագիւտ գանձ է: Ինչ մեծ զանազանութիւն կայ սրա մէջ, և երբ նայում ես վարքով ապականուած այն կօկէտներին, իսկ մարդկանց խօ մատնացոյց են անում:

(Վալէրի դրան բախում է).

Ի՛, քնքոյշ երիտասարդ, բացարէք:

### ՏԵՍԱՐԱՆ ԺԳ.

ՎԱԼԷՐ, ՍԳԱՆԱՐԷԼ, ԷՐՀԱՍՏ

ՎԱԼԷՐ. Շատ ուրախ եմ, որ ձեզ այստեղ տեսայ:

ՍԳԱՆ. Ձեր յիմարութեան պատճառով:

ՎԱԼԷՐ. Ինչպէ՞ս:

ՍԳԱՆ. Դուք շատ լաւ գիտէք, թէ ինչո՞ւ եմ եկել: Միշտ ասած, ձեզ մի խելացի մարդ էի ճանաչում: դուք, պարոն, կարծեմ կամենում էիք անտեղի դիտաւորութիւններդ ծածկել ինձնից: Այդ դէպքում ես խիստ չէի վարուիլ, բայց դուք սխալեցիք: Այդ ինչ համարձակութիւն է, որ դեռ նախագիծներ էլ էք կազմում: Կարծում էք որ յաջողութեամբ կարողէք աղջկան յափշտակել տնից և այսպիսով քանդել այն օրինաւոր նշանադրիքը, որից կախուած է նրա բախտը:

ՎԱԼԷՐ. Այդ ո՞վ ձեզ յայտնեց, յարգելի պարոն:



ՍԳԱՆ. Պարոն, չգիտցող_ մի՛ ձևանայ: Այդ բանը հէնց ինքը Եղիսաբէթը յայտնեց: Նա ապսպրեց վերջին անգամ յայտնելու, որ արդէն ընտրած ունէ: Վերջապէս համոզուեցէք, որ նա իմն է և պատրաստ է անձը զոհելու՝ իր կամքին հակառակ դէպքում: Նա հաստատ վճռեց, որ այլ ևս չ'ձանձրացնէք ձեր այցելութիւնովը:

ՎԱԼԷՐ. Եթէ յիրաւի նրա ասածներն են, ուրեմն էլ բան չէ մնում անելու, բայց միայն հրաժարուել նրա վրայ մտածելուց: Այժմ ամէն բան պարզ է. սուրբ պարտականութիւն եմ համարում կատարել նրա ցանկութիւնը:

ՍԳԱՆ. Շատ կարելի է դուք կասկածում լինէք, թէ իսկապէս նրա խօսքերն ու ցանկութիւնները չ'լինեն սրանք, ուստի բարեհաճեցէք համոզուելու համար ինձ հետ գալ: Նա կ'հաստատէ ասածներս: Դուք միայն այն ժամանակը խելքի կ'գաք և կ'տեսնէք թէ ո՞ւմ է համակրում: Ուրեմն գնանք:

### ՏԵՍԱՐԱՆ ԺԴ.

ԵՂԻՍԱԲԷԹ, ՍԳԱՆԱՐԷԼ, ՎԱԼԷՐ, ԷՐՀԱՍՏ.

ԵՂԻ. Ինչ նպատակով էք բերել այստեղ: Չ'լինի՞ թէ պաշտպան էք հանդիսացել: Մի՞ գուցէ նրա արժանաւորութիւններով գրաւուած լինէք, և կամենում էք, որ ես էլ հետևեմ ձեր օրինակին:

ՍԳԱՆ. Ո՛չ, Թուշնիկս, դու անգին ես: Ես աշխատեցի միայն ցոյց տալ որ դու վիրաւորվում ես նրան տեսնելիս և որ միայն ինձ վրայ ես մտածում: Կամենում եմ ձեռքովդ կորուստից ազատես նրան:

ԵՂԻ (Վալէրին). Եւ մի՞թէ, պարոն, ցանկութիւնս և կամքիս վրայ կասկած էք տանում:

ՎԱԼԵՐ. Այո։ Այն, ինչ որ ձեր հոգաբարձուն ձեր անունով ապսպրածը յաղորդեց՝ անպատմելի էր։ Հաւատացնում եմ որ խոստացածիդ վրայ կասկածելով, որը վճռողապէս պիտի որոշէ բախտս, կամեցայ ուղղակի բերանիցդ լսել։

ԵՂԻ. Չ՛գիտեմ թէ ինչո՞ւ պէտք է կասկածէք։ Կամքս շատ պարզ յայտնել եմ ձեզ. վճիռս շատ իրաւացի է թւում ինձ։ Եթէ մի կնոջ առաջ ներկայանում են երկու հակառակ ընտրութիւն, եթէ մէկին տրվում է հաւատ ու հակումն, իսկ միւսին նախանձ և ատելութիւն. եթէ նոյն մարդու ներկայութիւնը նրան հաճելի և թանկագին է, իսկ միւսինը սարսափելի ու անախորժ է. եթէ նոյն մարդուն կին լինելը նրա կամքին համաձայն է, և որ ուրիշի կին չդառնալուն կեանքից զրկուելը յանձն է առնում, էլ ինչ կասկած կարող է ընտրութիւնը խանգարել։ Մէկի յոյսերը ոչնչացնելու համար ամէն միջոցների պիտի դիմեմ և սէրս սիրածիս տալով՝ յաւիտեան ազատուեմ այսպիսի տանջանքից ու չարչարանքից։

ՍԳԱՆ. Այո, հոգիս, ցանկութիւնդ շուտով կ՛իրագործուի։

ԵՂԻ. Ո՜հ, որքան շնորհակալ կ՛լինեմ։

ՍԳԱՆ. Շատ կարճ ժամանակում։

ԵՂԻ. Ստիպուած եմ կանացի համեստութիւնը խեղդել իմ մէջ, բայց ինչ....

ՍԳԱՆ. Ինչո՞ւ։

ԵՂԻ. Բայց այնպիսի հանգամանքների մէջ եմ, որ առանց կարմրելու համարձակվում եմ յայտնել զգացմունքս նրան, որի օգնութեան կարօտ եմ։

ՍԳԱՆ. Այո, հոգիս, քաղցրիկս։

ԵՂԻ. Նա միայն պիտի ցոյց տայ որ համակրում է։

ՍԳԱՆ. Այո՛, հոգիս, դէ՛հ ձեռս համբուրիր։

ԵՂԻ. Եւ եթէ.. ճշմարիտ է նրա սէրը, ձեռս նրան է պատկանում, հէնց այստեղ երդվում եմ միայն նրանը լինել։



(Եղիսաբէթը այնպէս է ձեւանում, իբր թէ Սգանարէլի ձեռը համբուրել է կամենում՝ վերցնում է, իսկ իր ձեռը Վալերին է մեկնում նա համբուրում է)։

ՍԳԱՆ. Դէ՛ հը, սիրելիս, մի՛ նեղանայ, քեզ թոյլ չեմ տալ, որ այդքան տանջուես։ (Վալերին) Հը, ինչպէս էք, հէնց բերանիցը խօ լսեցիք՝ Վերջապէս համոզուեցաք, թէ ում է համակրում։

ՎԱԼԵՐ. (Եղիսաբէթին)՝ Այժմ համոզուեցայ։ Ձեր ցանկութիւնը ինձ համար շատ պարզ է. անպատճառ ամէն ջանք գործ կ՛դնեմ, որ ազատեմ ձեզ այն անտանելի մարդու ներկայութիւնից։

ԵՂԻ. Դուք ինձ կ՛պարտաւորեցնէք՝ Էլ համբերութիւն չունեմ այս վշտերը տանելու.....

ՍԳԱՆ. Ի՜հ, բաւական է։

ԵՂԻ. Արդեօք վիրաւորում են ձեզ այս խօսքերը՝

ՍԳԱՆ. Ո՜հ, բոլորովին։ Բայց ճիշտը ասած, շատ խղճում եմ երիտասարդին. դու բոլորովին երեսովն ես տալիս ատելութիւնդ։

ԵՂԻ. Այն հանգամանքների մէջ եմ գտնվում, որ դեռ քիչ է ասածներս։

ՎԱԼԵՐ. Ես հաստատ վճռում և խօսք եմ տալիս մինչև երեք օր հեռացնել ձեզ այս ատելի մարդուց՝

ԵՂԻ. Յաջողութիւն եմ ցանկանում։ Ցտեսութիւն։

ՍԳԱՆ. (Վալերին) Ցաւում եմ ձեզ վրայ։

ՎԱԼԵՐ. Ի՛նչ արած, ճակատիս այդպէս էր գրուած։ Օրիորդ Եղիսաբէթը կամեցել է այդպիսի ընտրութիւն անել, ես էլ պարտք եմ համարում խոնարհել նրա ցանկութեան առաջ։ Մնաք բարև։

(Վալերին գրկում է)

## ՏԵՍԱՐԱՆ ԺԵ.

ԵՂԻՍԱԲԷԹ, ՍԴԱՆԱՐԷԼ:

ՍԴԱՆ. Խեղճս է գալիս:

ԵՂԻ. Իսկի ինձ չի էլ թւում:

ՍԴԱՆ. Դու չգիտես, աղաւնեակս, թէ որքան յաճելի է համակրութիւնդ. ինչպէս երեւում է սպասելով տանջում ես. ութ օր, երկար՝ ձանձրալի օրեր են ձեզ համար. բայց այնպէս կ՚կրճատեմ, որ հէնց էգուցուանից իմը կ՚լինես:

ԵՂԻ. Ինչպէ՞ս, էգուցուանի՞ց:

ՍԴԱՆ. Գիտեմ, համեստութիւնը սանձահարում է զգացմունքներդ. Բայց ծածուկ ուրախանում կ՚լինես վճռիս վրայ:

ԵՂԻ. Բայց.....

ՍԴԱՆ. Նշանածս, ես իսկոյն ամէն պատրաստութիւններ կ՚տեսնեմ:

ԵՂԻ. (մի կողմ). Ո՜հ, Աստուած իմ, մի միջոց..... որ ազատուեմ այս թշուառութիւնից:

# ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ

## ՏԵՍԱՐԱՆ Ա.

ԵՂԻՍԱԲԷԹ (մենակ). Այս ինչ սարսափելի դրութիւն է: Աւելի լաւ է մեռնել, քան թէ այսպիսի ամուսնութիւն յանձն առնել: Ես ամէն միջոց գործ կ՚դնեմ, միայն թէ թշուառութիւնից ազատուեմ: Բայց շտապեմ պարզ գիշեր է, օգուտ քաղեմ դէպքից: Գնամ ձեռս Նրան տամ, որի սէրն ու ազնւութիւնը ինձ է վերաբերում:



## ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՍԴԱՆԱՐԷԼ, ԵՂԻՍԱԲԷԹ.

ՍԴԱՆ. (ծառային դիմելով) Շտապեցէ՛ք որ վաղը....

ԵՂԻ. Աստուած իմ.

ՍԴԱՆ. Այդ դո՞ւ ես աղաւնեակս: Այդպէս ո՞ւր: Դու չասացի՞ր, որ հոգնած ես և սենեակումդ պիտի հանգստանաս:

ԵՂԻ. Այո, բայց....

ՍԴԱՆ. Ի՞նչ է պատահել:

ԵՂԻ. Ձեզ հանդիպելով բոլորովին շփոթուեցայ և դժուարանում եմ բացատրել....

ՍԴԱՆ. Ախր ի՞նչ կայ:

ԵՂԻ. Քրոջս գաղտնի վարմունքից ստիպուեցայ տարաժամ տնից դուրս գալ: Ես նրան մի լաւ հայհոյեցի. բայց բերան չբացարեց: Նա սենեակս խնդրեց. փակեցի սենեակում ու դուրս եկայ:

ՍԴԱՆ. Ինչո՞ւ:

ԵՂԻ. Անհասկանալի երեւոյթ. Նա սիրահարուել է այն մարդու վրայ, որին դուրս ձգեցինք:

ՍԴԱՆ. Վալերի՞:

ԵՂԻ. Շփացածի պէս, Նա սաստիկ գրաւուել է: Էլ ինչ խօսեմ, քանի որ սենեակս է մտել և վճռել է մեռնել, եթէ Նրա կամքը չկատարուի: Արդէն ամբողջ տարի է, որ գաղտնի յարաբերութիւններ ունեն, քոյրս խօսք է տուել միայն Նրա՛ն սրտով պատկանել և ստացել է մի և նոյնը փոխադարձաբար:

ՍԴԱՆ. Ախ, գարշելի:

ԵՂԻ. Քոյրս իմացել է, որ Վալերը արտայայտել է սրտինը ինձ, և ես արհամարհանքով եմ նայել, ուստի յուսահատուած կամենում է հեռանալ: Քոյրս ասում է, որ չէ կարող համբերել և խնդրեց մի միջոցով Վալերին խաբել: Նա խնդրեց սենեակս մտնել,

երբ երիտասարդը փողոցով պատուհանի մօտից անցնի, Նրա փո-
խարէն ես խօսեմ Վալերի հետ, այն ժամանակ չի՛ գնայ այս տեղից:

ՍԳԱՆ. Եւ դու այս բանում...

ԵՂԻ. Ասես չասես շատ կռուեցինք: Ամօթ չէ քոյրիկ, ասա-
ցի, այդքան էլ պարզամտութիւն: Չես նկատում, որ նա թեթեւա-
միտ, դիւրահաւան մէկն է: Բացի դրանից, հոգաբարձուիդ էլ ես խա-
բում, որին հայրդ է նշանակել:

ՍԳԱՆ. Շատ ուրախեմ, ո՛յ տեղն է նրան:

ԵՂԻ. Ես շատ աշխատեցի հեռացնել այդ ամօթալի միտքը.
Նա արտասուքը աչքերին խնդրեց, որ արգելք չլինեմ. այնպիսի
յուսահատութեան մէջ ընկաւ, որ ակամայ պիտի համոզուէի: Եւ
որովհետև միշտ Լուկրէսի համեստութիւնը օրինակ էք բերում,
ես գնում էի նրան ինձ մօտ հրաւիրելու և ահա ձեզ պատահեցի:

ՍԳԱՆ. Ոչ, մի այդպիսի խայտառակութիւն իմ տանը թոյլ
չեմ տալ, իսկ ինչ որ վերաբերում է եղբօրս՝ թոյլ կ՛տայի. բայց
երբ օտար մարդիկ նկատեն երիտասարդին պատուհանիդ մօտ կան-
գնած ու քեզ վրայ խայտառակ լուրեր տարածեն, այն ժամանակ էլ
ինչպէս պահպանեմ անարատ անունդ: Աստուած ազատէ, եթէ կաս-
կածի տակ ընկար: Ես իսկոյն դուրս կ՛ձգեմ անամօթին:

ԵՂԻ. Հանդարտեցէք խնդրեմ: Շատ խիստ էք կամենում
վարուել: Դուք անհամեստութեանս համար առիթ էք տալիս նրան
նախատելու ինձ, բայց այն ինչ ոչինչ չպէտք է յայտնէի ոչոքի:
Իսկոյն ինքս կ՛գնամ ու կ՛հեռացնեմ սենեակից:

ՍԳԱՆ. Շատ լաւ կանես:

ԵՂԻ. Բայց խնդրեմ, առաջ ծածկուեցէք, որ չտեսնի ձեզ,
այնուհետև կարող էք դիտել թէ ինչպէս դուրս կ՛գնայ:

ՍԳԱՆ. Համեցէք, թո՛ղ այդպէս լինի, կանեմ: Բայց հէնց որ
դուրս գնաց թէ չէ, իսկոյն կ՛վազեմ եղբօրս մօտ և կ՛պատմեմ
այդ Նորութիւնը:



ԵՂԻ. Խնդրեմ խօսք չասէք իմ մասին: Ցտեսութիւն: Հէնց
որ քոյրս հեռացաւ՝ իսկոյն կ՛պարկեմ ու կ՛քնեմ:

ՍԳԱՆ. Առաւօտը ինձ սպասիր, տիկին: (մենակ) Հը՛մ, եղ-
բօրս նորութիւն եմ յայտնելու: Դեռ զարմանալին այն է, թէ ինչ-
պէս այն պարզամիտը իր սիրած Լէօնօրային հաւատում է: Եթէ
ես լինէի նրա արած մի քայլն անգամ կասկածելի կ՛լինէր ինձ հա-
մար:

ԵՂԻ. (իր սենեակում): Քոյրիկ, անախորժելի լուր եմ բե-
րել. բայց ճարն ինչ. ես պէտք է հրաժարեմ քեզ այստեղից: Իմ
անունով թոյլ տալ, որ դուք այստեղ տեսակցուէք, այդ իմ կողմից
մեծ յանդգնութիւն է: Ների՛ր: Ցտեսութիւն: Հեռացի՛ր, քանի
որ վաղ է:

ՍԳԱՆ. (Եղիսաբէթին տեսնում է դուրս գնալիս): Ա՛, ահա և
նա: Կարծեմ դուրեկան չէր: Պէտք է բանալիով դուռը կողպենք,
գուցէ նա վերադառնայ:

ԵՂԻ. (դուրս գալով): Տէր Աստուած, օգնիր մինչև վերջ:

ՍԳԱՆ. Դ՛է, տեսնենք ո՞ւր կ՛գնայ:

ԵՂԻ. (հեռանալով) Փառք Աստուծոյ, որ մութ գիշեր է:

ՍԳԱՆ. Հէնց այդ էր պակաս.—ուղիղ Փրանտի բնակարանը:
Ինչպիսի՜ բնակարան:

## ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՎԱԼԵՐ, ԵՂԻՍԱԲԷԹ, ՍԳԱՆԱՐԷԼ:

ՎԱԼԵՐ. (դուրս գալով տնից): Պէտք է մի կերպ տեսնուել
նրա հետ և վերջապէս վճռել: Յարմար դէպք, մութ գիշեր է. .
. . . Այդ ո՞վ է:

ԵՂԻ. Սո՛ւս, Վալեր: Ձեզ զգուշացրել են: Ես եմ,—Եղի-
սաբէթը:

ՍԳԱՆ. (ինքն իրեն)—Աստուած, անպիտան. նա քեզ պէս անազնիւ չէ։ Տես թէ ինչպէս նրա ձայնովն է խօսում։

ԵՂԻ. (Վալերին). Վալեր, իմ միակ մտածմունքն է կինդ լինելու.....

ՎԱԼԵՐ. Այո, այո։ Այդ իմ կեանքի միակ նպատակն է։ Երդւում եմ, որ այժմեանից կինս կանչեմ ձեզ։

ՍԳԱՆ. (ինքն իրեն). Խենթե՛ս.

ՎԱԼԵՐ. Հաւատացէք ազնւութեանս և համարձակ ոտ կոխէք իմ ճանապարհը։ Աւելին, քաղցրիկ Եղիսաբէթ, դուք շատ ազատուած էք. բախտներս բերաւ, որ կարողացաւ ուրախացնել նրան։ Եթէ բանէ, ձեզ ինձնից խլել կամենայ, նրա գլուխը տասը կ'տոր կանեմ։

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՍԳԱՆԱՐԷԼ (մենակ). Օ՜, ինչպէս չէ, համդարտուիր, ես ամենևին միտք չունեմ այն անպիտանին խլել, որ անամօթաբար սիրում է քեզ։ Ընդհակառակը, կինդ լինելու համար պէտք է աւելի հաստատ միջոցների դիմել։ Այո, անպատճառ պէտք է վրայ հասնել ու բռնել նրան, քանի որ Լեօնորան նրա սենեակումն է։ Նրա և Եղիսաբէթի հօր պատիւը պահանջում է, որ այս խայտառակ յարակցութեանը գոնէ օրէնքը պսակի ու վերջանայ։

(Ոստիկանապետի դրան բախում է).

## ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՍԳԱՆԱՐԷԼ, ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ, ՆՕՏԱՐ. ԾԱՌԱՅ (լապտերով).

ՈՍՏԻԿ. Ի՞նչ է պատահել։

ՍԳԱՆ. Մի այնպիսի դէպք, որ յարմար է ձեր ներկայութիւնը, պարոն Ոստիկանպետ։ Բարեհաճեցէք հետևել ինձ։ Ուշացնել անկարելի է։



ՈՍՏԻԿ. Բանը ինչումն է։

ՍԳԱՆ. Դուք կ'մտնէք այս տունը, ձեզ կ'հանդիպեն մի զոյգ երիտասարդ, որոնց պիտի ստիպէք ամուսնանալու։ Այն աղջիկը մեր տնից է. իսկ երիտասարդը գրաւելով նրան, խոստանում է ամուսնանալ նրա հետ ու այժմ մտել է աղջկայ սենեակը։ Նա ազնիւ հօր աղջիկ է, թէև....

ՈՍՏԻԿ. Եթէ այդպէս է, ահա և Նոտարը։

ՆՕՏԱՐ. Պատրաստ եմ ծառայելու, կայսերական Նոտարս։

ՈՍՏԻԿ. Աւելացրու դրա վրայ այն՝ որ նա չափազանց ազնիւ մարդ է։

ՍԳԱՆ. Այդ ի հարկ է այդպէս է։ Բայց բարեհաճեցէք ահա այս դռնով մտնել։ Դուք միայն առանց շփոթուելու կարգադրեցէք, որ ոչ ոք չ'դուրս գնայ տնից։ Իսկ ինչ որ ձեր քշած աշխատանքի շնորհակալութեան է վերաբերում՝ այդ մասին միամիտ կացէք. Բայց խնդրեմ չ'գրաւուէք միւս կողմի արած առաջարկութիւնից, որ ծածուկ ձեր ձեռը կ'խրեն։

ՈՍՏԻԿ. Ի՞նչպէս կարելի է։ Դուք կարծում էք, որ օրէնքի պաշտպանը....

ՍԳԱՆ. Չ'կարծէք թէ ձեզ վիրաւորելու մտքով ասացի։ Բայց պէտք է եղբօրը շուտով իմաց տամ։ Հրամայեցէք, որ ձեր ծառան լապտերով ուղեկցի ինձ։ Գնամ ուրախացնեմ բարեհոգի միամտին։

(Արիստի դրան բախում է).

## ՏԵՍԱՐԱՆ Զ.

ԱՐԻՍՏ, ՍԳԱՆԱՐԷԼ.

ԱՐԻՍՏ. Ո՞վ է։ Ա՛, դո՞ւ ես, եղբայր։

ՍԳԱՆ. Եթէ կ'բարեհաճես, սիրելի ծերուկս, գնանք մի հիանալի պատկեր ցոյց տամ։

ԱՐԻՍՏ. Ինչպէ՞ս։

ՍԳԱՆ. Մի լաւ լուր եմ բերել։

ԱՐԻՍՏ. Ի՞նչպէս։

ՍԳԱՆ. Ո՞ւր է Լէօնորադ, գիտե՞ս։

ԱՐԻՍՏ. Ի՞նչպէս թէ։ Նա պէտք է որ իր ընկերուհու հետ պարեհանդիսում լինի։

ՍԳԱՆ. Ի՞նչպէս չէ, ի՞նչպէս չէ. ապա գնանք ցոյց տամ, թէ ինչ պարահանդիսում է նա։

ԱՐԻՍՏ. Ինչե՞րես դուրս տալիս։

ՍԳԱՆ. Դու ճշմարտութիւն էիր քարոզում, թէ երիտասարդ սրտերում պէտք է քաղցր և զիջող սերմեր ցանել, թէ կասկածելը, փականքը և հսկողութիւնը չեն պաշտպանում կնոջ աղնւութիւնը, և թէ խստութիւնը վատ հետևանքի է հասցնում, ուրեմն պէտք է կանանց ազատութիւն տալ։ Հէնց այդ է պատճառը, որ ազատութիւնը Լէօնորիդ մէջ վերին աստիճանի զարգացել է։

ԱՐԻՍՏ. Բայց չեմ հասկանում թէ ինչ ես ուզում ասել։

ՍԳԱՆ. Գնանք, գնանք, իմ մեծ եղբայր։ Այժմ այդ տեսակ պատիւը երեսիդ կ'խփուի։ Դու կ'վայելես անխաստ գաղափարներիդ պտուղը ու կ'համեմատես երկուսիս համոզմունքների հետևանքը՝ Մէկը մերժեց անպիտանին, բայց միւսը հետևում է նրան գրկաբաց։

ԱՐԻՍՏ. Բաւական է, խնդրեմ, հանելուկ ասելու ժամանակ չէ, պարզ խօսի՛ր։

ՍԳԱՆ. Հանելուկս հասարակ է. Լէօնորան Վալերի պարահանդիսումն է, ինքս տեսայ նրան գիշերով նրա մօտ գնալիս և հէնց այս րոպէիս էլ նրա գրկումն է։

ԱՐԻՍՏ. Ո՞վ։

ՍԳԱՆ. Լէօնորադ։

ԱՐԻՍՏ. Հանաքի ժամանակ չէ։



ՍԳԱՆ. Լաւ հանաք է։ Վայ անտէր գլխիդ՝ Ես ասում եմ, որ Լէօնորադ երիտասարդի տանն է, և որ նրանք միմիանց մէջ սիրոյ ուխտ են կապել՝ դեռ Եզիսաբէթին հետևելուց շատ առաջ։

ԱՐԻՍՏ. Ես այս բաներից գլուխ չեմ հանում։

ՍԳԱՆ. Այո, կարելի է մինչև անգամ աչքերովդ տեսածն էլ չհաւատաս։ Կատաղեցնում ես ինձ։ Կարծեմ հասունի տարիքը ոչինչ օգնութիւն չեն անում, երբ դեռ խակ է։ (Ցոյց է տալիս ճակատը)։

ԱՐԻՍՏ. Թէ Աստուած սիրես, ասա՛, ի՞նչ ես ուզում։

ՍԳԱՆ. Ամենևին ոչինչ։ Ինձ հետ եկ և կ'համոզուես, որ այդ կապը արդէն մի տարի է տևում է։

ԱՐԻՍՏ. Ես չեմ հասկանում։ Եթէ մեկին իսկապէս համակրում է, ապա հարցրի ինչու չասաց։ Կարծեմ ես նրա կամքը երեխայութիւնից սկսած չեմ բռնաբարել և միշտ խնդրել եմ ամեն բանում առաջ ինձ դիմէ։

ՍԳԱՆ. Այդ իսկոյն կ'տեսնես։ Արդէն ոստիկանապետին և նոտարին հրաւիրել եմ, որ օրէնքով նրա անաղնւութեան համար ամուսնանալու վճիռ տան։ Չ'կարծեմ թէ այսպիսի խայտառակութիւնից յետոյ վճռես ամուսնանալ նրա հետ։ Բայց շատ կարելի է, որ այժմ պատճառներ ունես նրան արդարացնելու համար։

ԱՐԻՍՏ. Ես դեռ այնքան խելազուրկ չեմ, որ բռնանամ կնոջ կամքի վրայ։ Բայց այնուամենայնիւ չեմ հաւատում......

ՍԳԱՆ. Ա՛յ թէ խելօք խօսքեր։ Լաւն այն է գնանք։

## ՏԵՍԱՐԱՆ Ը։

ՍԳԱՆԱՐԷԼ, ԱՐԻՍՏ, ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ, ՆՕՏԱՐ.

ՈՍՏԻԿ. Չպէտք է բռնութեան ետևից ընկնել, պարոններ։ Եթէ ձեր համոզմունքը նրա մէջ է միայն, որ այն երիտասարդ սրտերը կ'ուզղեն իրենց սխալները ամուսնանալով, երիկուսն էլ

յօժար են այդ բանում։ Երիտասարդը ստորագրութիւն տուեց պսակուել այն օրիորդի հետ, որի սենեակում գտնվում էր ինքը։

ԱՐԻՍՏ. Իսկ նա, այն աղջիկը՞.....

ՈՍՏԻԿ. Նա փակուած է իր սենեակում, չէ կամենում դուրս գալ, մինչև որ դուք գրաւոր համաձայնութիւն չըտաք։

## ՏԵՍԱՐԱՆ Ը.

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ, ՆՕՏԱՐ, ՍԳԱՆԱՐԵԼ, ԱՐԻՍՏ.

ՎԱԼԵՐ. (պատուհանի մօտ կանգնած). Պարոններ, ձեզնից ոչ ոք սենեակս չմտնի, եթէ գրաւոր համաձայնութիւն չի տայ։ Դուք գիտէք որ իմ պարտքը կատարեցի. ես կանոնաւոր ստորագրութիւն տուի, որին դուք չէիք սպասում։

ՍԳԱՆ. Ոչ, մենք միտք չունենք ձեզնից հեռացնելու նրան։ (մի կողմ) Խեղճը հէնց գիտէ թէ Եղիսաբէթն է. ուրեմն, շտապեմ օգուտ քաղեմ։

ԱՐԻՍՏ. (Վալերին) Բայց մի՞թէ Լէօնորան է։

ՍԳԱՆ. (Արիստին) Լռի՛ր։

ԱՐԻՍՏ. Բայց...

ՍԳԱՆ. Պապանձուի՛ր է։

ԱՐԻՍՏ. Կամենում եմ իմանալ։

ՍԳԱՆ. Տէր ողորմեա՛։ Կպապանձուի՞ք, թէ ո՛չ, ձեզ հետ չե՛մ։

ՎԱԼԵՐ. Սակայն ինչ որ էլ լինի ես Եղիսաբէթին խօսք եմ տուել ու խօսք եմ առել, միայն դուք էլ ստորագրեցէք, այնուհետև կ'կատարեմ վճիռը։

ԱՐԻՍՏ. (Սգանարելին)։ Նա ինչ որ ասաց այնպէս չէ.....

ՍԳԱՆ. Լռի՛ր խնդրեմ, պատճառը կասեմ։ (Վալերին)։ Դուք գաղտնիք ունէք։ Այո՛, էլ ինչ հեռուն գնամ, մենք համաձայն ենք այն օրիորդի հետ, որը սենեակումդ է։



ՈՍՏԻԿ. Ամէն բան գրուեցաւ։ Բայց որովհետև նրան չենք տեսել, ուստի անուան համար տեղ է պահուած։ Ստորագրեցէք։ Ձեր աղջիկը յետոյ կստորագրի։

ՎԱԼԵՐ. Այդ մի շատ հիմնաւոր բան է։

ՍԳԱՆ. Իսկ ես սրտով ցանկանում եմ։ (մի կողմ). Ինչ լաւ ծիծաղ կ'լինի։ (բարձր) Ահա՛, ստորագրեցէք, եղբայր, այս պատիւը ձեզ է վերաբերում։

ԱՐԻՍՏ. Բայց այս ինչ խորհրդաւոր.....

ՍԳԱՆ. Ա՜խ, նզովից արմատ, այդ ինչ ձևեր են։ Ստորագրի՛ր, թշուառ ծերուկ։

ԱՐԻՍՏ. Նրա խօսքը Եղիսաբէթի մասին է, բայց դու ինչ Լէօնորա ես ասում։

ՍԳԱՆ. Հէնց թող թէ Եղիսաբէթը լինի, քո ինչ գործն է, եթէ երկուսի կամքը մի է։

ԱՐԻՍՏ. Ի հարկ է։

ՍԳԱՆ. Հ՛ը, ստորագրի՛ր ես էլ եմ ստորագրում։

ԱՐԻՍՏ. Խա՜չ վկայ։ Գլուխս պատռուի թէ բան լինիմ հասկանում.

ՍԳԱՆ. Յետոյ կ'հասկանաս, քիչ համբերի՛ր։

ՈՍՏԻԿ. Այժմ մենք կարողենք մնալ։

ՍԳԱՆ. Ահա՛ հէնց այժմ կամենում եմ բացատրել այս խաղի նպատակը։

(քաշվում են բեմի խորք)։

## ՏԵՍԱՐԱՆ Թ.

ԼԷՕՆՕՐԱ, ՍԳԱՆԱՐԵԼ, ԱՐԻՍՏ, ԼԻԶԵԹ.

ԼԷՕՆՕՐԱ. Ո՜հ, մահացուցիչ վիշտ. ես ինչ անեմ այս յիմար մարդկանց հետ։ Նրանց սիրոյն մի լաւ պարահանդէսից զրկուեցի։

ԼԻԶԵԹ. Նրանցից իւրաքանչիւրը կամենում է հաճոյանալ ձեզ։

ԼԵՕՆՕՐԱ. Ինձ համար շատ անտանելի է, երբ ուսման ու
աստղաբաշխութեան վրայ վատ աչքով են նայում և զարդակ խօ-
սակցում։ Նրանք կարծում են թէ իւրաքանչիւր կին անպատճառ
պիտի ենթարկուի փոշած ծամերին և դրաւիչ խօսքերով բացադրի
սրտինը։ Նրանք բարի և ազնիւ ծերի սիրոյ վրայ ծիծաղում և
սարսափում են իրենց զարդակ գլուխներով։ Ես աւելի գոհ կ'լի-
նէր բարեկամական խօսակցութիւն ունենալ այն ծերի հետ, քան
թէ գործ ունենալ այդպիսի ցնդաբանական՝ տհաս գլուխների հետ։
Բայց կարծես թէ.....

ՍԳԱՆ. (Առանձին) Ահա այսպիսի բաներ են պատահել։ (Լեօն-
օրային նկատելով) Հը՜մ, դուրս է էկել, աղախինն էլ հետն է։

ԱՐԻՍՏ. Լեօնօրա, առանց նախանձուելու, միայն ինձ սփոփե-
լու համար պիտի հարցնեմ. ինչո՞ւ ես ծածկել ինձնից դէպի ու-
րիշը ունեցած սէրդ, քանի որ հազար անգամ խնդրել եմ սրտիդ
պղտացածը բացանել առաջս, դու չգիտե՞ս որ իմ կանոնները մեղմ
են։ Ես էլի խաղաղ սրտով հաւատում եմ. բայց յանկարծ քայլդ
սարսափեցնում է ինձ։ Ահա՛ թէ ինչ է իմ հաւատարմութեան և
բարեկամութեան շնորհակալութեան փոխարէնը։

ԼԵՕՆՕՐԱ. Ես չեմ հասկանում, թէ խօսքը ինչի վրայ է։
Բայց մտածմունքս նոյնն է ինչոր առաջ. նոյն յարգելին էք իմ
աչքում. եթէ գրաւուած լինեմ ուրիշից, իմ կողմից յանդգնու-
թիւն է։ Որպէս զի խօսքերս ճշմարիտ անեմ. հէնց էգուցուանից
պատրաստ եմ ձեր կինը կոչուելու։

ԱՐԻՍՏ. Վերջը ինչ եզրակացութեան հասաք, եղբայր.....

ՍԳԱՆ. Ինչ՛, բաս այժմ ո՞վ դուրս եկաւ Վալէրի սենեա-
կից. մի՞թէ խօսք չէիք տուել այսօր միմիանց տեսնել. ով գիտէ
ամբողջ տարին յարաբերութիւն էլ չէիք ունեցած լինիլ։

ԼԵՕՆՕՐԱ. Ո՞վ է ձեզ այդպիսի սխալ սուտ հաղորդել և
ո՞վ է այդ բամբասողը։



## ՏԵՍԱՐԱՆ Ժ.

ԵԳԻՍԱՐԵԹ, ՎԱԼԵՐ, ԼԵՕՆՕՐԱ, ԱՐԻՍՏ. ՍԳԱՆԱՐԷԼ. ՈՍՏԻԿԱՆԱ-
ՊԵՏ. ՆՈՏԱՐ, ԼԻԶԵԹ, ԵՐՀԱՍՏ.

ԵԳԻ. Մեծահոգի եղի՛ր, քո՛յր և ների՛ր, որ այնպէս հասա-
րակ կերպով վարուեցի ձեզ հետ։ Եթէ անհամեստ քայլ եմ արել,
այդ նրանից է, որ ճնշուած եմ եղել անփախչելի թշուառութեան
մէջ և ես զանազան միջոցներ պիտի գործածէի։ Բայց գիտես. ճա-
կատագիրը երկու հանգամանքի մէջ է դրել մեզ։ (Սգանարէլին)
Ձեզնից, պարոն, աւելորդ եմ համարում ներողութիւն խնդրել,
որովհետև ոչ մի բանում պարտական չեմ ձեզ։ Նախախնամութիւնը
մեզ չէ կապում միմիանց հետ, ես էլ արժանի չեմ համարում ըն-
գտնել այդպիսի մի բախտ։ Ես ցանկանում եմ ձեռս մի ուրիշին
տուած տեսնել և չեմ էլ կամենում ձեր գրութիւնից օգուտ քաղել։

ՎԱԼԵՐ. (Սգանարէլին). Իսկ ես կ'ասեմ, պարոն, որ մեծ
պարտք դրէք վրաս, որովհետև ամէն փառք և բախտ ձեր ձեռով
ստացայ։

ԱՐԻՍՏ. Մի՛ հոգա եղբայր. Ինչ արած, մի այսպիսի խաղ
միայն քեզնից սպասելու է։ Գիտեմ որ սաստիկ խաբուած ես, բայց
դժուարը այն է, որ ձեր թշուառ գրութեան կարեկից եղող չկայ։

ԼԻԶԵԹ. Իսկ ինչոր ինձ է վերաբերում, ճշմարիտն եմ աս-
ում, այդ հանգամանքում շատ ուրախ եմ։ Ինչ որ ցանես, այն էլ
կ'հնձես։

ԼԵՕՆՕՐԱ. Ես չեմ կարող քրոջս գովել, բայց կներեմ նրան։

ԵՐՀԱՍՏ. Իմ կարծիքով՝ ավոր այդպիսի բաներում հմուտ է
պէտք է խաբել։ Նա դեռ շատ էժան է պրծել.

ՍԳԱՆ. (Սթափուելով այն մոլորութիւնից, որի մէջ նա գտնվում էր).
Ահ չգիտեմ թէ ու՞ր եմ. Մի այսպիսի լրբութիւն խելք մտքից
չէ հեռանում. Չկարծեմ թէ հէնց ինքը սատանան անգամ կարող-

անայ մտածել մի այսպիսի չարութիւն, ինչոր այս անարգ աղջիկը։ Ես նրա վրայ այնքան վստահ էի, որ ջուրն անգամ պատրաստ էի ընկնելու։ Թշուառ է նա, որ սրանից յետոյ կնոջ կհաւատայ։ Նրանցից ամենալաւը մինչև կոկորդը անբարոյականութեան մէջ է խրուած։ Նրանք ստեղծուած են միայն աշխարհը տակնուվրաանելու։ Հէնց այս րոպէիս ինձ համար գոյութիւն չունի այն սատանայի ծնունդ, խաբեբայ՝ նենգաւոր սեռը։ Թող գրողը տանի ամենին էլ։

ԷՐՀԱՍՏ. Ըհ՞ը։

ԱՐԻՍՏ. Գնանք մեր տուն։ Գնա՛նք, պարոն Վալեր։ Մենք էգուց կաշխատենք հանգարտացնել եղբօրս։

ԼԻԶԷԹ. (ժողովրդին) Համարձակւում եմ առաջարկել, որ եթէ ձեր մէջ էլ այսպիսի անտաշներ կ'պատահեն՝ ուղարկէք մեր ուսումնարանը։

ՎԵՐՋ.

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԹԵՐԹԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՂՆԵՐ

### Ա Գ Ո Ւ Լ Ի Ս

| | Օրին. |
|---|---|
| 1) Բաղդասար Տէր Միքայէլեան | 5 |
| 2) Եղիսաբէթ Տէր Միքայէլեան | 2 |
| 3) Եկատերինէ Տէր Միքայէլեան | 2 |
| 4) Հերակլէս Տէր Միքայէլեան | 1 |
| 5) Ղուկաս Սամարչեանց | 2 |
| 6) Յարութիւն Գէորգեանց | 2 |
| 7) Թևան Արասխանեան | 4 |
| 8) Սօփիոյ փ. Արասխանեան | 2 |
| 9) Շուշանիկ Արասխանեան | 1 |
| 10) Յովհաննէս Արասխանեան | 1 |
| 11) Ալէքսանդր Տէր Մկրտչեան | 4 |
| 12) Աւետիս Մնացականեանց | 2 |
| 13) Սարգիս Աբեանց | 1 |
| 14) Խաչատուր Փանեանց | 4 |
| 15) Գէորգ Մնացականեանց | 1 |
| 16) Ալէքսանդր Դուլղարեանց | 8 |
| 17) Յարութիւն Շահնազարեանց | 1 |
| 18) Էյվազ Գուլմիրեանց | 2 |
| 19) Սարգիս Թոփչեանց | 2 |
| 20) Մարտիրոս Դուլղարեանց | 4 |
| 21) Ստեփան Տէր Մկրտչեանց | 2 |
| 22) Թումաս Ասլանեանց | 2 |

| | Օրին. |
|---|---|
| 23) Յովհաննէս Բէգլարեանց | 4 |
| 24) Հայրապետ Արասխանեանց | 6 |
| 25) Անթառամ խ. } փանեանց. | 1 |
| 26) փանի } | 1 |
| 27) Գայանէ } | 1 |
| 28) Նինօ } | 1 |
| 29) Աղէքսանդր Արեանց | 2 |
| 30) վարդուհի խ. Տապտապեանց | 2 |
| 31) Մելքօն Քալանթարեանց | 37 |
| 32) Թագուհի Քալանթարեանց | 50 |

## Թ Ի Ֆ Լ Ի Ս

| | |
|---|---|
| 1) Աղէքսանդր Կարապետեան | 1 |
| 2) Շամիր Մէլիք Փալաեանց | 1 |
| 3) Սոփիան Արասխանեանց (աղուլեցի) | 2 |
| 4) Աննման Արասխանեանց (աղուլեցի) | 2 |
| 5) Մկրտիչ Ռօստոմեանց (աղուլեցի) | 2 |
| 6) Յովհաննէս Բարխուդարեանց (աղուլեցի) | 1 |
| 7) Սառա Բարխուդարեանց (աղուլեցի) | 1 |
| 8) Զարգարեանց Առշակ | 1 |
| 9) Աղէքսանդր Յարութինեանց | 1 |
| 10) Մելսակ—Սահփ. Անդրէասեանց | 1 |
| 11) Միքայել Յարութինեանց | 1 |
| 12) Արիստակէս Զարգարեանց | 1 |
| 13) Սմբատ Սարգսեան | 1 |
| 14) Սարգիս Տէր Ղազարեանց | 1 |
| 15) Երուանդ Ապրելեան | 1 |
| 16) Ռամիկեանց Դաւիթ | 1 |
| 17) Հրանտ պ. | 2 |
| 18) X. | 2 |

# ՄՈԼԻԵՐԻ

## ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ֆրանսիացի պաստառագործի որդի, հռչակաւոր կոմիկական բանաստեղծ Ժան-Բատիստ Պօքըլէն Մօլիէրը ծնաւ 1622 թ.: Հայրը նրան այն արուեստին տուեց, որով պարապում էր ինքը, և ահա հէնց այս պատճառով երեխան տասնչորս տարեկան հասակում միայն կարդալ ու քիչ գրել գիտէր: Բայց բարեբախտաբար Մօլիէրը մի խելօք պապ ունէր, որ միշտ թատրոն տանում ու զարթեցնում էր նրա մէջ սէր դէպի թատերական արհեստը: Յետոյ պապը խնդրեց Մօլիէրի հօրից, որ նրան Քլերմօնի կօլլէգիան (ուսումնարան) ուղարկի: Պօքըլէնի ընկերներից նշանաւորն էր Կօնտի Բուրբօն Արման դուքսը, որ վերջը բանաստեղծին յաճախ պաշտպանեց: Մօլիէրի բախտը այն ժամանակ բանեց, երբ նշանաւոր փիլիսոփայ Գասսենդին նրա դաստիարակը դարձաւ: Զարգացած դաստիարակը ծանօթացրեց նրան կլասիկական մատենագրութեան երեւելի հեղինակութիւնների հետ: Մօլիէրը ամբողջ կեանքում մի առանձին համակրութեամբ էր ուսումնասիրում Լուկրեցիայի «De natura Rarum» փիլիսոփայութիւնը, և մինչև անգամ փորձ փորձեց ոտանաւորով թարգմանել: Նրա ծեր հայրը թագաւորական սենեկապետ—պաստառագործի պաշտօն էր վարում. իսկ երբ հայրը ուժից ընկաւ, որդին նրա տեղը

բանից, և ահա մեր ապագայ երևելի կատակերգակ, Ֆրանսիայի փառքը փայլում է Լուդովիկոս XIII պալատում իբրև սենեկա-պետ—պաստառագործ: Այդ ժամանակ, Ռիշիլիէի շնորհով, Ֆրանսիացոց ազգի մէջ մեծ համակրութիւն ստացաւ թատերական գործը: Բացուեցան զանազան մասնաւոր թատրոններ: Պօքլէնը մի քանի երիտասարդ դերասաններից խումբ կազմեց և անուանեց «L'illustre Theatre» (Հռչակաւոր Թատրոն): Այս նոր խումբը շուտով վայր ձգեց միւս խմբերի նշանակութիւնը: 1641—42 թ. Պօքլէնը իր անունը Մօլիէր փոխեց, երևի նրա համար, որ ծնողքը չասեն թէ իրենց անունը բալագաններում երևան հանելով ամբողջ Փարիզի առաջ խայտառակում է, որովհետև այդ ժամանակ դերասանութիւնը մի շատ ստոր պաշտօն էր համարվում: Փարիզից իր փոքր խմբով շրջեց Ֆրանսիայի զանազան քաղաքները. ահա հէնց այստեղից է սկսում նրա գրականական գործունէութիւնը: Մօլիէրի առանձին փոքր ինչ կանոնաւոր պիէսան էր «L'etourdi», որ ներկայացուեցաւ Լիոնում 1653 թ.: Բէզիէրում դուքս Կօնտին մեծ ուրախութեամբ ընդունեց նրան, որի ներկայութեամբ ներկայացրեց իր փոքր բէպէրտուարից բոլոր պիէսաները և գրաւեց վսեմ պաշտպանի ուշադրութիւնը: Դուքսը Մօլիէրի տաղանդի վրայ հիանալով առաջարկեց ատենադպրի պաշտօնը. դ ե ր ա ս ա ն ը մերժեց.... Մօլիէրը մի քանի ժամանակ Ֆրանսիայի հարաւամասնում շրջելուց յետոյ՝ վերջապէս 1658 թ. մտաւ Փարիզ: Թագաւորական ցեղի հետ ծանօթի միջնորդութեամբ և Թագաւորի եղբօր պաշտպանութեան շնորհով Լուդովիկոս XIV Թագաւորի ուշադրութիւնը գրաւեց: Նրանց խորհուրդով 1658 թ. նոյեմբերի 3-ին Մօլիէրը բացեց մի թատրոն, որի համար մօտ 15 տարում երեսուն պիէսա հեղինակեց.... Փարիզի հասարակութիւնը շատ հաւանեց Մօլիէրի «Les precieuses ridicules» պիէսան (1652): Յիշած պիէսան խաղալիս մի ծեր պօրտէրից (նստարան) աղաղակում է.



«Համարձակ, համարձակ Մօլիէր: Այ քեզ գեղեցիկ կատակերգութիւն»: Նոյնպէս մեծ յաջողութիւն գտան հետևեալ կատակերգութիւնները. «Տղամարդկանց խրատ» (1661 թ.), «Կանանց խրատ» (1662 թ.): Բայց բանաստեղծի ճշմարիտ փառքի վաստակն են. «Մարդատեաց» (1666 թ.), «Տարտիւֆ» (1667 թ.) և «Ագահ» (1688 թ.): Սրանք են կազմում Մօլիէրի բանաստեղծական միւս գրուածների պսակը: Մօլիէրին յարգում էին ժամանակակից երևելի մարդիկը: Լուդովիկոս XIV հարցրեց Բուալօից. ով է ժամանակակից երևելի հեղինակը—«Մօլիէր», հաստատ կերպով պատասխանեց բանաստեղծը: Լաֆօնտէնը յայտնում է իր համակրութիւնը հետևեալ գամբանագրով.

Sous ce tombeau gisent Plaute et Perence
Et cependant le seul Molière y git *).

Վօլթէռ աւելի առաջ: Նա յափշտակուելով «Մարդատեացի» հեղինակից՝ արտասանեց այս խօսքերը. «մարդարէանում եմ, որ մենք երբէք ուրիշ Մօլիէր չպէտք է ունենանք»: Մօլիէրը մեռաւ 1673 թ. փետրվարի 17-ին: Փարիզի հոգևորականութիւնը չէր կամենում եկեղեցական ծէսերով թաղել նրան, որովհետև դերասան էր: Լուդովիկոս XIV գրեց Փարիզի արքեպիսկոպոսին, որ Մօլիէրի դիակը քրիստոնէավայել կերպով հողին յանձնեն.... Նրա գերեզմանը սուրբ Յովսէփի գերեզմանատան մէջ փորեցին: Կրօնական ծիսակատարութեան տեղը բանից դէպի հանճարեղ բանաստեղծը բոլորի յարգանքն ու բարեկամութիւնը. երկու հարիւր մարդ կերոններ ձեռին երկու քահանայի առաջնորդութեամբ ուղեկցում էին դիակը: Ֆրանսիական ակադէմիան չկարողանալով Մօլիէրին կենդանի ժամանակ ընդունել

*) Այս գերեզմանի մէջ հանգչում են և Պլաւտը և Տէրէնսը, թէև նրա մէջ հանգչում է միայն մի „Մօլիէր“:

իբրև անդամ, որովհետև դերասան էր. բայց բանաստեղծին պատուի վայել տեղ տուին մահից յետոյ: 1778 Թ. վարչութիւնը որոշեց ակադէմականների աշխատութիւնների դահլիճում կանգնացնել Մօլիէրի կիսարձանը Սօների այս տողերը փորագրած. «Rien ne manque à sa gloire; il manquait à la notre», (Նրա փառքը ոչինչի կարօտ չէ. իսկ մերը կարօտ է նրանից): 1844 Թ. յունուարի 15-ին փարիզում կանգնեցին Մօլիէրի արձանը: Այն օրը Արագօն կարդաց դամբանական ճառ:

Թարգմանութիւն Փիլօնովի խրեստօմատիայի III հատորից:

# ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԽՐԱՏ.

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՍԳԱՆԱՐԷԼ . . . } եղբայրներ։
ԱՐԻՍՏ . . . . . .

ԻԶԱԲԵԼԷԹ . . . } քոյրեր։
ԼԷՕՆՕՐԱ . . .

ԼԻԶԷԹ, Լէօնորայի աղախինը։
ՎԱԼԵՐ, Իզաբելլայի սիրահարը։
ԷՐԳԱՍՏ, Վալերի ծառան։
ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ
ՆՈՏԱՐ։

Անցքը պատահում է Փարիզում։



# ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՈՒԱԾ

## ՏԵՍԱՐԱՆ Ա.

### ՍԳԱՆԱՐԷԼ, ԱՐԻՍՏ։

ՍԳԱՆԱՐԷԼ. Էհ, ինչի ենք կռւում, եղբայր, թող ամէն մարդ իր ուզածի պէս ապրի։ Թէև ինձանից մեծ ես և քո հասակի մարդիկ աւելի խելօք են լինում, բայց չկարծես թէ հէնց քեզ բարկացնելու համար չեմ ցանկանում հետևել խորհուրդներիդ—ոչ, այլ թէ յարմար եմ տեսնում իմ սեփական բնաւորութեան և համոզմունքների համաձայն ընթանալ և ուզածիս պէս ապրել։

ԱՐԻՍՏ. Չնայելով որ այդպիսի կեանքը պախարակելի է։

ՍԳԱՆԱՐԷԼ. Այո, քեզ պէս յիմարների համար։

ՍԳԱՆԱՐ. Եթէ բանը այդ տեղը հասաւ, ուրեմն, ասացէք խնդրեմ, ձեր այն խիստ կրիտիկոսները ինչու են ինձ յանդիմանում։

ԱՐԻՍՏ. Քո խիստ բնաւորութեան, յամառութեան համար, որ հեռանում ես ընդհանուր սովորութիւնից. դեռ դէնը մնայ հագուստդ և վայրենի արարմունքդ։

ՍԳԱՆ. Շատ գեղեցիկ, ուրեմն, ուզում ես ասել թէ ինչ որ ես եմ ցանկանում այն չհագնեմ, այլ մոդին հետևեմ։ Չե՞մ ուզում, սիրելիս, որ ես այս հասակումս կամքիդ համաձայնուելով զարդասէրների օրը ընկնեմ և ինձ այնպէս պահեմ, ինչոր յատուկ է խաղամոլ տղաներին։ Խօսքդ այն է, ես էլ այն գդակից ծածկեմ, որ հագնւ է նրանց դարդակ գլխի վրայ կանգնում. այն չէկ փոշած

կեղծամից, որի տակից դէմքը հազիւ է երեւում. այն պոչաւոր բաճկոնից և երկար օձիքից, այն լայն թեւերից, որոնք ճաշելիս խաշուի մէջ են ընկնում. այն շրջազգեստից հագնեմ, որին անդրավարտիկ են ասում. նեղ կօշիկներից ժապաւէն կախեմ, թաւոտն աղաւնուպէս, և բարձր կրունկներ ունեցող կօշիկների վրայ փրանտների նման թռչկոտելով մանգամ: Ոչ, այդ իմ բանը չէ, քեզ եմ յանձնում այդ տեսակ յիմարութիւններ:

ԱՐԻՍՏ. Իմ կարծիքով, միշտ պէտք է մեծամասնութեան հետ յարմարուել և ոչ թէ բացառութիւն կազմել: Ամէն չափազանցութիւն աչքի է ընկնում. և փոքր ի շատէ խելացի մարդ հագուստի և քաղաքաւարական ձեւերի մէջ ոչ ստրկաբար մօդին կը հետեւի, ոչ էլ յետ կ'մնայ նրանից: Ուրեմն, ինչպէս որ չպէտք է մօդին շատ հետեւել, նոյնպէս և հարկաւոր չէ յամառութեամբ հեռացնել իրանից այն որ ընդունել են բոլորը: Լաւ է յիմարների մէջ յիմար ձեւանալ, քան խելօք լինել:

ՍԳԱՆ. Սա միշտ նման է այն ծերին, որ աշխատում է սպիտակ մազերը կեղծամի տակ ծածկել:

ԱՐԻՍՏ. Զարմանում եմ, եղբայր, թէ ինչպիսի սովորութիւն ունես, որ միշտ տարիքս, հագուստս և բաւականութեան հետեւելն ես կրկնում հա կրկնում: Կարծես թէ ծերը պէտք է անտարբեր մնայ և միայն մահուան վրայ մտածի: Միթէ ծերի, էլ ինչ ասել կուզէ, այլանդակ մարմինը կեղտոտութեան ու ապականութեան մէջ պիտի փտի:

ՍԳԱՆ. Ինչ, ինչ որ էլ լինի, երբէք ձեռից չեմ տալ այն հագուստը, որին սովոր եմ: Ես կամենում եմ չհետեւել ձեր կամքին և մի այնպիսի գդակ ծածկել, որ գլուխս ծածկի, մի երկար, կոճկած բաճկոն, որ ստամոքսս տաք պահի և մարսողութեանն էլ կանոնաւոր ընթացք տայ. մի վարտիկ ոչ լայն և ոչ երկար, միշտ ինձ վրայ. այնպիսի կօշիկներ, որ մատներս չսեղմեն, որոնցից մեր



| | Օրին. |
|---|---|
| 19) Աստուածատուր Սպարապետեան | 1 |
| 20) Հասան—Ջալալեանց Վախթանգ | 4 |
| 21) Գուլակեան Աւետիս | 1 |
| 22) Կոլօմնեան | 1 |
| 23) Տէր Գրիգորեանց | 1 |
| 24) Սարիբէգ Յարութիւնեանց | 1 |
| 25) Յակոբ Մանասեանց | 1 |
| 26) Մինաս Պատրեանց (ագուլեցի) | 1 |
| 27) Մկրտիչ Բէգլարեանց (ագուլեցի) | 1 |
| 28) Խաչատուր Պատրեանց (ագուլեցի) | 1 |
| 29) Յով. Թումեանց (ագուլեցի) | 2 |
| 30) Ալէքսանդր Կիրկօզեանց | 1 |
| 31) Խաչատուր Ֆանեանց (ագուլեցի) | 1 |
| 32) Աբրահամ Շխինեանց | 1 |
| 33) Մարազեանց Յարութիւն | 1 |
| 34) Պալասանեան Խաչատուր | 1 |
| 35) Ջանումեան Յովսէփ | 1 |
| 36) Ագամիրզեանց Աւետիս (ագուլեցի) | 2 |
| 37) Փանեանց Աւետիս (ագուլեցի) | 4 |
| (38) Մարգարիտ Քալանթարեանց (ագուլեցի) | 4 |
| Նուէր Աննա Բ. Տէր—Կարապետեանցին թարգ. (ագ.) | 2 |
| Նուէր Ագուլիսի ընթերցարանին թարգ. | 2 |
| Նուէր Մարիամ Թաղէոսեանցին թարգմանչից | 1 |

## ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՍԽԱԼՆԵՐ

| Եր. | տող. | սխալ | ուղիղ. |
|---|---|---|---|
| II | 29 | պօրտէր | պարտէրր. |
| 1 | 9 | — — | ԱՐԻՍՏ. Ո՜ նորհակալեմ ք<br>ղոյցիդ համար (կոմպլիմ |

2293

2013